

ԱՌԱՆՑ ԴԱՒԱՆԱՆՔԻ

Ժամանակակից վէպ Հէնրիկ Սենկելիչի

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Շարունակութիւն ¹⁾)

13 մալիսի.

Կլարան ու Սնեատինսկիները չեկան։ Սնեատինսկին նամակ էր զրել, որով յայտնում էր, թէ վաղը՝ կը գան, եթէ լաւ եղանակ անի։ Այսօր Պլոշովը տակն ու վրայ արեց այնպիսի մի փոթորիկ, որի նմանը այստեղացիք վաղուց է չեն յիշում։ Առաւօտեան ժամի տասին մօտ յանկարծ մի տօթաշունչ քամի վեր կացաւ ու այնպիսի թող ու դուման բարձրացրեց, որ արևն այլ ևս չէր երևում։ Հողմը շարունակ չէր փշում, այլ մէկ բոլորովին նօտում էր, մէկ էլ յանկարծ բարձրանում և այնպիսի սաստիութեամբ, որ ծառերը ճկում էր՝ հասցնում գետնին։ Այդպէս շարունակւեց մինչեւ կէսօր։ Մեր գեղեցիկ ծառաստանը թնդում էր կոտրատող ճիւղքերի ճարճատիւնից և մէդ ու փոշիի մէջ պտոյտ-պտոյտ էին գալիս հազարաւոր պոկւած տերեներ։ Ահագին կակղին, որ կանգնած էր աջակողմեան ֆլիգէլի առաջ, որի մէջ մեռաւ լատիշ դպիրը, ճեղքւեց՝ մէջից երկու եղաւ։ Անտանելի տօթ էր. քիչ էր մնում մարդ խեղդ-

1) Տես «Մուլգ» 1892 թ. №№ 1, 2, 3, 4, 5, 6, 7—8, 10 և 11։

էր օդի պակասութիւնից. մեզ թւում էր, թէ այդ հողմը հրաւէր օդի պակասութիւնից. մեզ թւում գալիս և ածուխի գոլորշներ էր բերում շէկ հնոցից էր դուրս գալիս և ածուխի գոլորշներ էր բերում հետը: ննձ, որ Խտալիացում ընտելացել եմ սիրոկիօյին, այդ շատ էլ չէր ազդում, բայց պանի Յելինան շատ էր տանջւում, նրա հետ էլ Անելկան, իսկ հօրաքոյրս գորս դու պատուիրեցիր Նախատեց կառավարիչ Խւաստովսկուն պարտէզում կատարող աւերածի պատճառով: Դիւրաբորբոք շեխախիչը, որի ականջները անշուշտ շատ քաշած կը լինեն ուսումնարանում Հոմերոսի պատճառով, ինչպէս երեսում էր չէր մոռացել ոչ Ոդխականը, ոչ էլ այն, որ իւր բերնումն էլ լեզու կայ, որովհետեւ պատասխանեց հօրաքրոջս, թէ, եթէ ինքը Եօլը¹⁾ լինէր, ոչ նրա կալւածների կառավարիչ կը դառնար, ոչ էլ անարդար Նախատինքների կ'ենթարկւէր նրա կողմից: Հօրաքոյրս այս անդամին տեղի տեց կարծեմ դիխաւորապէս այն պատճառով, որ երկնքի կողմից նոր սպառնալիքներ էին երեան գալիս: Կէսօրից յետոյ օդը յանկարծ բոլորովին խաղաղւեց, բայց դրա փոխարէն սկսւեցին կուտակւէլ ամպի վիթխարի շեղջեր՝ մերթ սաթի պէս սե, մերթ միջուկը պղնձադոյն ու շուրջը սոկերանգու Երբեմն գիշերւայ պէս մթնում էր, այնպէս որ պանի Յելինան խնդրում էր ճրագ վառեն, երբեմն էլ նորից երկիրը լուսաւորւում էր չարագուշակ շառագոյն ցոլքով: Ամբողջ բնութիւնը կարծես ահ ու դողի մէջ էր: Պան Խւաստովսկին վազ տեց ագարակը, որ հրամայի՝ տաւարը դաշտից տուն բերեն, բայց, ինչպէս երեսում էր, Նախարածները իրանք հրաման ստանալուց առաջ քշել բերել էին նախիրը, որովհետեւ մենք շուտով լսեցինք կովերի աղիողորմ բառանցը, որ փոթորկից առաջ տիրող խաղաղութեան մէջ հասնում էր մեզ աղարակի գոմանոցից: Հօրաքոյրս վերցրեց Լօրէտեան (Loretansky) զանգակն ու սկսեց սենեակէ սենեակ ընկած, որքան ուժումը կար, զանգահարել Ես մինչև անդամ փորձ՝ չարեցի բացատրել նրան, որ այդ տեսակ անշարժ մթնոլորակ մէջ զանգահարութիւնը աւելի կարող է գրաւել քան մղել շանթերը և չը նայելով, որ շատ լաւ գիտէի, թէ նրան այդ դէպքում ոչ մի բանով օգնել չեմ կարող, ես էլ հետը սենեակէ սենեակ ման էի գալիս, որովհետեւ ամաչում

¹⁾ Հոմերի Աստւածը՝ լունաց դէւցաբանութեամբ:

էի թողնել, որ նա մենակ կեանքը վտանգի ենթարկեր։ Հօրաքոյրս միանդամացն հիանալի էր, երբ զլուխը բարձրացրած խիզախարար նայում էր ամպերի այդ սե ու շառագոյն շեղջերին և սաստում էր նրանց իւր զանդակով։ Ֆէի ափսոսում, որ գնացի նրա հետ սենեակները պտտելու, որովհետեւ առաջիս կարծես մի խորհրդանիշ պատկեր էր կանգնած, - այն ժամանակ, երբ ամեն ինչ դողում է ամպրոպից, սարսափահար գետին է տապալւել ու պապանձեւը միմիացն հաւատն է, որ վախ չի զգում, կուտի է կանչում ու զանգահարում է։ Այդ, ինչ էլ լինի, անհուն զօրութեան տարր է մարդկային հոգու մէջ։

Մենք վերադառնք, երբ որ առաջին որոտմանքները սկսեցին թնդացնել ամբողջ երկնակամարը։ Մի քանի բոպէից յետոյ ամոլի գոռոցը անընդհատ դարձաւ։ Ինձ այնպէս էր թւում, թէ երբ որոտը գլորւում է ամպեղէն կտուրի վրայով, կտուրը պահող գերանները խորտակւում են ու այդ բոլորը միասին անասելի դպրոցով թափւում է գետին։ Կայծակը խփեց առաջ ծառ աստանի ծացրի լճակին, յետոյ իսկոյն կրկին խփեց աւելի մօտիկ այնպէս, որ մեր տան պատերը հիմքից սասանւեցին։ Մերսնք սկսեցին աղօթել, իսկ ես մի բոպէ սաստիկ անախորժ դրութեան մէջ էի, որովհետեւ ինձ թւում էր, եթէ նրանց հետ միասին աղօթեմ, փարիսեցիութիւն կը լինի ի՞շ կողմից։ Եթէ չ'աղօթեմ, արածս կը նմանի անբարեկիրթ իմաստակի պարծենկոտութեան, որը ի նկատի չի առնում ընդունած գեղջկական սովորութիւնը և մանսաւանդ կանանց զգացած երկիւղը։ Նակայն շուտով նկատեցի, որ սիսալած եմ եղել կարծելով թէ նրանք վախենում են։ Նրանց դէմքերը հանգիստ էին և մինչև անգամ զւարթ։ Անշուշտ այդ սովորական աղօթքը նրանց այնպիսի զօրաւոր վահան էր թւում բոլոր վտանդների դէմ, որ վախ ասած բանը նրանք չէին կարող զգալ։ Մի ուրիշ բան էլ անցաւ այդ ժամանակ մտքովս, այն է՝ որքան խորթհոգի է իմ հոգին այդ երեք լին կանանց մէջ, որոնցից իւրաքանչեւրը ինձնից տամասպատիկ քիչ բան դիտէ, բայց մարդկանց սովորական չափով տաս անգամ աւելի արժէ քան ես։ Նրանք նման են այնպիսի գրքերի, որոնք համեմատաբար քիչ էջեր ունեն, բայց մի են պարզ ու որոշ կանոններով, մինչդեռ այն բոլոր հատորնե-

բում, որոնցից ես կազմած եմ, չը կայ և ոչ մի աներկբայելի ճշմարտութիւն և ես առաջինը պատրաստ եմ երկմտել նրանցում պարունակւած ճշմարտութիւնների վերաբերմասբ։

Բայց այդ միտքը կարճ տևեց, որովհետև նրան ցիրուցան արեց փոթորիկը, որ քանի գնում աւելի սարսափելի ծաւալ էր ստանում։ Հողմը նորից փշեց այնպիսի սաստկութեամբ, որ նրա թափից ամրող ծառաստանը փռուում էր գետին։ Երբեմն-երբեմն քամին յանկարծ դադարում էր, և այն ժամանակ տարափ էր տեղում երկնքից։ Զոկ-ջոկ կաթիլներ չեին երևում, այլ ջրի անընդհատ լարեր, որոնք կապում էին երկինքը երկրի հետ։ Պարտէզի ծառուղիները յորձանահոս հեղեղատներ դարձան։ Ժամանակ առ ժամանակ հողմի անակնկալ ահռելի շունչը ցիր ու ցան էր անում, փոշի էր դարձնում երկնքի ու երկրի մէջ փառ կապած ողջ ջուրը և այնպիսի մէգ ու մառախուզ էր պատում երկիրը, որ մասդ մարդու աչք կոլսէիր՝ չէր տեսնիլ։ Որոտի խլացուցիչ ուրբակոծութիւնը ամենախն չէր դադարում։ Մթնոլորտը յագեցած էր էլեքտրականութիւնից Երակս ծանր էր զարկում։ անենեակներումն անգամ զգացւում էր փոթորկի գրգռիչ հոտը, որ շանթի հարւածներից է յառաջանում։ Ի վերջոյ, հետեւելով բնութեան տարրերին, իմ մոքերն ու իղձերն էլ կապները կարեցին։ Փոթորիկը մոռացայ ու միայն Անելկային էի տեսնում առջես. գլուխս բոլորովին կորցրեցի և մօաենալով նրան ասացի.

— Ուզմում ես փոթորկին նայել։

— Ինչու չե, պատասխանեց նա։

— Գնանք այն սենեակը... Այնտեղ վենետիկեան լուսամռուտ կայ նա եկաւ ինձ հետ և մենք կանգնեցինք պատուհանի մօտ։ Այդ բռպէին խաւարը աւելի սաստկացաւ, գրեթէ կատարելապէս մթնեց, բայց մի քանի վայրկեան անցած խաւարի սև քողը պատառուտեցին սովորակ ու շիկակարմիր փայլակներ՝ բանալով երկնքի խորքը և միենոյն ժամանակ լուսաւորելով մեր երեսներն ու ջրով հեղեղւած երկիրը։ Անելկան հանգիստ էր, միայն թէ ամեն փայլառակումից յետոյ ինձ աւելի տենչալի էր թւում։

— Ձես վախենում, հարցը ի ես շշնջաձայն։

— Ոչ...

—Զեւքդ տուր ինձ...

Նա զարմացած նայեց ինձ վրայ: Մի բոպէ ևս ևս կը գրկէի
նրան ու շրթունքներս կը սեղմէի նրա շրթունքներին, իսկ յետոյ
ինչ ուզում էր լինէր, թէկուզ Պլոշովը գետնի տակն երթար: Բայց
նա վախեցաւ—ոչ փոթորկից—այլ իմ դէմքի արտայալտութիւնից
ու շշունջիցս, և շատապով հեռանալով պատուհանից՝ վերադարձաւ
այն սենեակը, ուր նստած էին հօրաքոյրս ու իւր մայրը:

Մնացի մենակ՝ ստորացման ու զայրոյթի զգացմունքով: Ես
անտարակոյս ի չարը դործ կը գնէի Անելիալի վատահութիւնը, բայց
այնուամենայնիւ ինձ թւում էր, թէ նա իւր անվստահութեամբ
վիրաւորանք հասցրեց ինձ: Վճռեցի այդ զգացնել տալ նրան: Այդ-
պիսի տրամադրութեան մէջ ես դժւարութեամբ կարողացայ վերա-
կանգնեցնել հոգեկան հաւասարակշռութիւնս. մի ժամկի չափ
մնացի կանգնած պատուհանի առաջ ապուշի պէս նայելով շացու-
ցիչ փայլակներին: Մինչ այդ մթութիւնը հետզետէ փարաւում
էր, եղանակը հետզետէ պարզում էր և ի վերջոյ տմպերը պատո-
ւեցին ու նրանց բացւածքից փայլեց արելը, որ կարծես լողարա-
նից էր դուրս գալիս և զարմանում էր տեսնելով փոթորկի պատ-
ճառած աւերմունքները:

Իսկ փոթորիկը շատ մեծ աւերած էր արել. պարտէզի ծա-
ռուղիներով դեռ ևս հոսում էր դեղնագոյն ու փրփրալից անձրեա-
ծուրը, որի երեսին ցից-ցից լողում էին կոտրատուած ճիւղքեր:
Տեղ-աեղ երեսում էին տապալւած ծառեր: Իսկ կանգուն մնացածնե-
րից շատերի բների վրայ հեռուից նշմարում էին ահազին վէր-
քերի նման պլոկւածքներ: Ուր նայում էիր՝ կործանումն էր ու
աւերած որպէս թէ պատերազմից յետոյ:

Երբ որ ջուրը մի քիչ նստեց, գնացի դէպի լճակները, որպէս
զի աւելի մօտիկից տեսնէի աւերածը: Յանկարծ ծառաստանը մըր-
ջիւնանոցի կերպարանք ստացաւ: Ինչ որ մարդիկ ահազին բազմու-
թեամբ սկսեցին զարմանալի եռանդով ու գւարճութեամբ կտրատել
բեկրեկւած ճիւղքերը և ջարդել տապալւած ծառերը: Դուրս եկաւ,
որ դրանք անտուն զիւղացիներ էին, որոնք սեփական անտառ
չունեն, և կացիններն առած՝ փոթորկից խորտակւած ցանկապա-
տովը ներս էին մոել իրանց համար ցախի պաշար հաւաքելու:

Խակապէս ասած, այդ իմ հոգս չէր ամենեին, բայց որովհետեւ
նրանք այդ առանց թոյլտութեան էին անում ու վայրենաբար և
վերջապէս որովհետեւ տրամադրութիւնս վատ էր, սկսեցի զուրս
քշել նրանց սատոիկ զայրովթով, որ քանի գնում այլ ևս սաստկա-
քշել նրանց գիշաղրութիւնից: Արդէն այնտեղ էի հասել, որ
սպառնում էր շինական տանուաէրին կանչել, երբ յանկարծ լեռնիս
կողմից լսեցի՝ ինձ համար աշխարհքիս ամենաքաղցը ձայնը, որ
հարցնում էր վրանսերէն:

— Միթէ մնաս կը լինի մեզ, Լէօն, որ դրանք պարտէզը մաքրեն:
Շուռ եկայ և տեսայ Անելկացին՝ գլխին գլխաշոր կապած: Նա
երկու ձեռքով բարձրացրած պահում էր հագուստը, այնպէս որ
մինչեւ պճեղները բաց էր արել բարձր կօշիկներ հազած փոքրիկ
ուսները, և մի քիչ առաջ կռացած՝ նայում էր ինձ կարծես խընդ-
րական հայեացքով:

Նրան որ տեսայ՝ բարկութիւնս ձեռաց-ձեռ նստեց: Ես մոռա-
ցայ սիրոս մի քիչ առաջ տրորող դառն զգացմունքները, հիացած
նայում էի նրան ու աչքս չէր կշտանում նայելուց:

— Այդպէս ես հրամայում, հարցրեցի ես:

Ու դառնալով դէպի գիւղացիներն՝ ասացի:

— Շնորհակալութիւն արէք աղջիկ-պարոնին ու ցախը կի-
տէք՝ տարէք:

Այս անգամին հրամանս սիրով կատարեցին: Ումանք, անշուշտ
չի հանալով թէ ով ինչ դիրք ունի մեր ընտանիքում, շնորհակալու-
թիւն անելիս նրան զյասնա panienka¹⁾ էին անւանում, որ ինձ
անասելի հաճոյք էր պատճառում: Եթէ Պլոչովն իմս լինէր, նրա
խօսքովը թոյլ կը տայի, որ ամբողջ ծառաստանը կտրեն՝ տանեն: Կէս
ժամայ մէջ, ինչ որ փոթորիկը կոտրատել՝ ջարդել էր, սրբեցին՝
տարան և ծառաստանը աւելի ուրախ կերպարանք ստացաւ: Անել-
կայի հետ ծառուղիներով ման գալով անթիւ ծիծեռնակներ ու
ուրիշ թռչուններ դուանք, որոնք կամ բոլորովին սատկոտել էին

¹⁾ Լեհերէն pani (լսանում) ասում են մարդատէր կնոջ, իսկ բառա
և նրա նւազականը՝ panienka (լսանրաջի) — օրիորդին:

գոմորկից կամ կիսամեռ. էին ու այնպէս թրջւել էին, որ ջուրը ծլծլում էր վրաներիցը, նրանց որ վերցնում էի գետնից ու տալիս Անելիային, ձեռքս կպչում էր նրա ձեռքին, նայում էի նրա աշքերին և ես դարձեալ լաւ էի զգում ինձ: Երէկւան իդիլիան նորից սկսւեց մեզ համար և նրա հետ միասին սկսւեցին առաջւան ազատ յարաբերութիւնն ու ուրախութիւնը: Սիրոս հրճւում էր, որովհետեւ ես տեսնում էի այն, ինչ որ Անելիան էր տեսնում, այն է՝ որ մեր իբր քոյք-եղբայրական յարաբերութեան մէջ կրկնապատիկ աւելի քնքշութիւն կար քան կարող էր և պարտաւոր էր լինել թէկուզ ամէնազորովալից ազգականների մէջ: Կատարելապէս հաւասար էր ինձ համար, որ նա ինձ սիրում է անգիտակցարար, բայց սիրում է բոլորովին այնպէս՝ ինչպէս ես նրան: Այդպիսով իմ՝ յոյսերի ու ցանկութիւնների մեծ մասը կատարւած էր, մնում էր ինձ միայն այնտեղ հասցնել, որ նա գիտակցէր ու հասկանար իւր զգացածը:

Այս բոպէիս որ դրա մասին մոռածում եմ, երջանկութիւնից բարախող սրաով մոռաբերում եմ, որ մի ժամանակ այս միշտակարանումը գրել եմ, թէ աշխարհում ոչ մի կին չի կարող դիմադրել այն տղամարդուն, որ սիրելի է իւր սրտին:

15 մալիսի.

Մեր հիւրերը այսօր եկան և ոչ երէկ, ու շատ էլ լաւ արեցին, որովհետեւ մինչև այսօր գետինը դեռ կարգին չէր չորացել, և այսօր եղանակը հիանալի էր: Մայիսի տասնըհինգը միշտ իմ կեանքի ամենալիշտակաւոր օրերից մէկը կը լինի: Այժմ արդէն կէս գիշերից անց է, սակայն քնած չեմ և չեմ պառկում քնելու. քոնս բոլորովին փախել է, զգացութիւններս այն աստիճան գրգռւած են, որ յօգնութիւն ամենեին չեմ զգում և մոռազիր եմ մինչև առաւօտ շարունակ գրել: Աշխատում եմ միայն, որ վերջից չը սկսեմ ու ամեն բան կարգով գրի անցնեմ: Արդէն բաւական վարժել եմ միշտակարան գրելում, այնպէս որ ազդ շատ էլ դժւար չէ ինձ համար:

Հօրաքոյրս կառքը շատ վաղ ուղարկեց. Անեատինոկիների ու կլարայի յետելից, այնպէս որ արդէն կէսօրից առաջ նրանք Պլո-

շովումն էին: Մնեատինսկան ու Կլարան շատ ուրախ-գւարթ եկան ու ծտերի պէս ճըլւըլում էին: Երեռում էր, որ շատ մեծ զւարժութիւն էր պատճառում նրանց հիանալի եղանակն ու իրանց տրած ճանապարհորդութիւնը: Ի՞նչ հագուստներ էր հագներին, ինչ ֆանտաստիկական գլխարկներ՝ գլուխներին: Կլարայի շերտշերտ ու բացդոյն շորը շատ էր սազում նրան, որովհետև այդ հագուստով նա սովորականի պէս ահազին չէր երեռում: Նկատեցի, որ Անելկան հէնց առաջին բոսկէից ուշով զննում էր նրան ու կարծես զարմացել էր տեսնելով նրա գեղեցկութիւնը, որի վերաբերմամբ նրան գրեթէ ոչինչ չէի ասել Կլարայի մասին խօսելիս: Այդ դիտմամբ չի եղել, այլ ուղղակի նրանից, որ իմ ուշ ու միտքս բոլորովին գրաւած է Անելկայով,— Թնացած բաները՝ որը մտքովս չի անցնում, որն էլ սկի չեմ տեսնում: Այ օրինակ, չը նայելով, որ երկու անգամ եղել եմ Մնեատինսկիների մօտ, բացց միայն այժմ Պլոշովում նկատեցի, որ պանի Մնեատինսկան մազերը կարճ խուզել է, որ պէտք է ասած նրան շատ է սազում: Այդ բացդոյն ու ճակատի վրայ թափւած ցցունքը նրան խիզախ ու կարմրաթուշիկ պատանու տեսքը է տալիս: Այժմ ես ու նա շատ բարեկամ ենք իրար հետ: Մի ժամանակ նա Անելկայի պատճառով այնքան թշնամացել էր ինձ հետ, որ արիւնս տային՝ կը խմէր: Սակայն յետոց մարդը, ինչպէս երեռում է, պատմել է նրան, թէ որքան եմ տանջել, և քանի որ կանայք առհասարակ սասարիկ թուլութիւն ունեն դէպի այն մարդիկ, որոնք տանջւել են սէրից, նա ներել է իմ բոլոր մեղքերն ու սկսել է քաղցր սրտով վերաբերւել ինձ: Այդ սիրունիկ, կայտառ վարմունքի մէջ անբռնազրօսիկ կնոջ ներկայութիւնը շատ օգնեց Անելկայի ու Կլարայի մէջ սկզբում տիրող սառը յարաբերութիւնների դէպի լաւը փոխւելուն: Ինչպէս նկատեցի, հօրաքոյրա, որ իրան երախտապարտ է զգում Կլարային, նրան չափից վեր սրտագին ընդունեց, իսկ Անելկան ընդհակառակը, չը նայելով իւր վերին աստիճանի քաղաքավարի բնաւորութեանն ու բնածին քաղցրութեանը, կարծես այլայլած լինէր ու մի քիչ բռնազրօսիկ տրամադրութեան մէջ: Այդպէս տեսեց մինչև նախաճաշ, երբ ընդհանուր ուրախ խօսակցութեան մէջ նա ու Կլարան մի քիչ մօտիկացան իրան: Կլարային ապշեցրեց Անելկայի գեղեցկութիւնը

և քանի որ նա չափից վեր պարզ է ու սովորել է արտայալսել իւր մոքերը արտիստին յատուկ ազատութեամբ, այժմ էլ առանց քաշւեռ Անելկային յայտնեց իւր հիացմունքը, բայց այն գողորիկ կերպով լւ այն աստիճան անկեղծ ոգեորութեամբ, որ այդ չէր կարող չը շահել Անելկայի սիրալ։ Պանի Յելինան, որ ներկայ էր նախաճաշին, այդ գովասանքները լսելով քիչ-քիչ ուռում-փերում էր և թէպէտ այդ առաջին անգամն էր կեանքումը, որ ժամանակ էր անցկացնում արտիստական աշխարհին պատկանող մի կնոջ հետ, հետզհետէ աւելի ու աւելի քաղցր աչքով էր սկսում նայել Կլարային։

Վերջը նա դարձաւ Կլարային ու ասաց, որ թէկ իրան չի սազիլ, բայց պէտք է ասէ, որ Անելկան հէնց փոքրուց շատ ասուզով երեխայ էր և, այն ժամանակւայ սիրունութեանը նայելով, հիմա պէտք է տասնապատիկ աւելի զեղեցիկ լինէր։ Մնեատինսկիներն էլ խառնւեցին խօսակցութեան մէջ։ Մարդը իսկոյն սկսեց վիճել Կլարայի հետ կանանց զանազան տիպերի մասին և սկսեց դատողութիւն տալ Անելկայի տիպի ու նրա էսթետիկական կատարելութեան մասին այնպիսի ծիծաղաշարժ օրյեկտիւութեամբ, կարծես Անելկան պատից կախ արած պատկեր լինէր և ոչ թէ կենդանի ու ներկայ եղող մի անձնաւորութիւն։ Խոկ նա, լսելով իւր ժաման այդպիսի դատողութիւններ, այնպէս էր կարմրում ու քաշ գցում երկար ու խիտ թերթեռունքները, կարծես փոքրիկ աղջիկ լինէր և այդպիսով աւելի ևս սքանչելի կերպարանք էր ստանում։

Ես չի խօսում, բայց մտքումն համեմատում էի այդ երեք կանանց դէմքերը և աշխատում էի նայել նրանց վրայ նոյնպէս օրյեկտիւ կերպով, այսինքն մի կողմ թողնելով այն հանգամանքը, թէ ես Անելկային անչափ սիրում եմ և հետեւաբար նա բոլորովին բացառիկ էակ է ու այնքան դրաւիչ, որքան չի կարող լինել ոչ մի ուրիշ կին։ Սակայն համեմատութիւնը, մինչև անգամ այդպիսի պայմաններում, նրա համար նպաստաւոր հետեւանք ունեցաւ։ Պանի Մնեատինսկայի գլուխը, մանաւանդ այժմ որ մազերը խուզել է, շատ զողարիկ է, բայց այդպիսի զլուխ կարելի է գտնել ամեն մի անգլիական «keepsake»-ում։¹⁾ Կլարայի զեղեցկութիւնը կազմում

¹⁾ Եքեղ պատկերներով զարդարւած հրատարակութիւն։

Ծան. թ-

են նրա մեղմ՝ դիմագծերը և գլխաւորապէս նրա կապուտակ աչքերը
ու թափանցիկ կաշին, այնպիսի կաշի, որ առհասարակ ունենում
են գերմանուհիները. սակայն եթէ նա արտիստ չը լինէր, որի
շնորհիւ մարդ նրան նայելիս միշտ միևնոցն ժամանակը մտածում
է և երաժշտութեան մասին, նրա դէմքը ամենաշատը միայն սի-
րուն կարելի էր անւանել: Անելկան ոչ միայն կանոնաւոր դիմագծեր
ունի, ոչ միայն մարմնացումն է չափազանց ազնիւ ճաշակի տէր
գեղարւեստագէտի գլխում յղացած գաղափարի, այլ և մէջը այն-
պիսի մի անհատական բան ունի, որ չի կարող ոչ մի ընդհանուր
տիպի յարմար գալ: Դուցէ այդ անհատական առանձնացուկութիւնը
նրանումն է կայանում, որ նա ոչ թուխ լինելով, ոչ շէկ, Փիզի-
կապէս թուխի տուպաւորութիւն է գործում, իսկ բարոյապէս չէկի.
գուցէ դրա պատճառն այն է, որ համեմատաբար փոքրիկ դէմքի
հետ շատ վարսառատ է, բայց ինչ էլ լինի, նա իր տեսակում ան-
գուզական բան է: Նա այդ կողմից մինչև անգամ տիկին Դեհսից
էլ բարձր է: Տիկին Դեհսը անաղարտ գեղեցիկ էր, բայց արձանի
գեղեցկութեամբ նա զարթեցնում էր իմ մէջ զարմանք և կիրք,
Անելկան, բացի այդ, ծնեցնում է և իդէալիստի զգացումներ, իդէա-
լիստի, որը հիմնում է նրա դէմքի արէղիացով և այն էլ նոր,
մինչև այդ ժամանակ չը տեսնաւծ, պօէղիացով:

Բայց համեմատել անգամ շեմ ուզում այդ երկու չափից վեր
տարբեր էակներին: Նախաճաշի ժամանակ ես անձնատուր եղայ այդ-
պիսի խորհրդածութիւնների, նախ այն պատճառով, որ խօսակցու-
թիւնը այդ տեսակ բաների մասին էր և երկրորդ, որ Անելկայի
գեղեցկութեան անալիզը ինձ միշտ մեծ գլարճութիւն է պատճա-
ռում: Հօրաքոյրս ընդհատեց այդ խօսակցութիւնը, որովհետեւ հա-
մոզած էր, որ ինքը, իբրև հիւրասէր տանտիկին, սրարտաւոր է
Կլարայի հետ խօսել վերջին կոնցերտի մասին: Նա շատ խօսեց և
շատ լաւ խօսեց. ես ենթադրել անգամ չէի կարող, թէ նա այդ-
քան տեղեակ է երաժշտութեան. բացի այդ, նա իւր հաճոյախօ-
սութիւնները ասում էր այնպիսի grande—dame' ային քաղցրու-
թեամբ, այնպիսի կոկ և սիրուն ձեռվ, ինչպէս կարողանում են
հաճոյախօսել միայն աւագ սերունդի մարդիկ, որոնք մասամբ իւ-
րացրել և մինչև այժմ պահպանել են տասնութերորդ դարի ոգին:

Մի խօսքով ես զարմացմամբ նկատեցի, որ իմ շխտակախօս հօրագոյքը ուղած ժամանակը կարողանում է միտքը բերել կեղծ ծամերի ու կեղծ խալերի (mouche) դարը։ Կլարան, որի սիրտը դրաւում էր այդ, նրանից յետ չը մնաց։

—Վարշաւայում, ասաց նա, ես միշտ լսու կ'ածեմ, որովհետև հասարակութիւնը ինձ հասկանում է, բայց ամենից լսու ես նւազում եմ ծանօթների փոքր շրջաններում, ուր ամենքը ինձ համակրելի են,—և եթէ թոյլ կ'տաք, ես կաշխատեմ ձեզ այդ ապացուցանել նախաճաշը վերջանալուն պէս։

Հօրաքոյրս, որ սաստիկ ուղում էր, որ պանի Ցելինան և Անելիան լսեն Կլարայի նւազելլը, բայց չէր իմանում, վայելու կը լինի արդեօք իւր տան մէջ խնդրել նրան, որ ածի, հիանալի տրամադրութեան մէջ ընկաւ։ Ես սկսեցի պատմել Կլարայի Փարիզի դէրիւտների ու Երարի դահլիճում տարած յաղթանակների մասին, Մնեատինսկին մանրամասնօրէն հաղորդեց, թէ ինչ են խօսում Վարշաւայում, և այդպէս անցաւ ժամանակը մինչև նախաճաշի վերջը։ Երբոր վերկացանք, Կլարան բռնեց պանի Ցելինայի բազկաթոռի թեւերից՝ նրան հիւրասենեակը տանելու համար ու ոչոքի չը թողեց որ իրան փոխարինի, ծիծաղելով ու ասելով, որ անշուշտ ինքը մեր բռլորիցը ուժեղ է և չի վախենում թէ ձեռները կը յօդնեն։ Մի բոպէ անցած, նա նստեց ածելու և այս անզամ երեխ նրա տրամադրութեանը ամենից շատ համապատասխանում էր Մոցարտը, որովհետև մենք լսեցինք Շոն—Փուանը։ Հէնց առաջին դաշնաձնները հնչեցին թէ չէ, Կլարան բոլորովին կերպարանափոխեց։ Նա այլ ևս այն սիրուն և ուրախ երեխան չէր, որի հետ մենք խօսում էինք նախաճաշի ժամանակ, այլ կարծես անձնաւորւած սուրբ Յեցիլիա լինէր։ Մի տեսակ կազ էր հաստատում նրա արտաքին տեսքի ու երաժշտութեան մէջ։ Նրա վրայ իջնում էր ինչ որ հոգեկան լրջութիւն ու ներդաշնակութիւն, որ նրան սովորական կանանցից բարձր էակ էր դարձնում։ Այդ միջոցին ես մի դիտողութիւն արեցի, այն է, որ սիրահարւած տղամարդու սիրտը կարողանում է բորբռքել իւր զգացմունքը մինչև անզամ այնպիսի բաներով, որ նպաստաւոր չեն սիրած կնոջը։ Երբոր մտածեցի,

թէ որքան անընդունակ է իմ Անելկան այդպիսի Սիրիլա ¹⁾ դառնաւ, երբոր տեսայ թէ ինչպէս նա երեխայի պէս, հանդարտ ու կարծես ճնշւած նստած էր դահլիճի անկիւնում, զգացի, որ հէնց այդ պատճառով ևս առաւել եմ սիրում նրան և որ նա դրանով աւելի ևս թանկ է ինձ համար: Մտքովս անցաւ նոյնպէս և այն, թէ կինը իրօք այնպէս չէ, ինչպէս նրա մասին կարծում են առհասարակ մարդիկ, այլ այնպէս, ինչպէս նրան տեսնում է նրա վրաց սիրահարւած մարդը, և թէ նրա բացարձակ կատարելութիւնը, այսինքն նրա կատարելութիւնը ինքն ըստ ինքեան և ոչ ուրիշների անձնական հայեացքների համեմատ, ուղիղ յարաբերական է այն սիրոյ ոյժին, որը նա կարողացել է զարթեցնել իրան սիրողի սրտում: Ժամանակ չունեի երկար կանդ առնելու այդ դադափարի վրայ, բայց նա շատ սրտովս եկաւ, որովհետև աղօտ կերպով նշմարում էի և այն եզրակացութիւնը, թէ յանուն այդ կատարելութեան կինը պէտք է համաձայնի պատկանել այն սրտին, որը իրան ամենից շատ է սիրում:

Կլարան նւազում էր հրաշալի կերպով: Ես աշխատում էի միւսների դէմքերի վրայ նշմարել, թէ ինչ տապաւորութիւն է գործում նրա նւազումը, սակայն իսկոյն նկատեցի, որ Անելկան էլ իմ դէմքի վրայ է աշխատում նշմարել կրածս տպաւորութեան արտայալութիւնը: Արդեօք այդ հասարակ հետաքրքրութիւն էր, թէ անգիտակցական անհանգստութիւն սրտի, որ չի կարող ասել, թէ ինչից է վախենում և սակայն վախենում է: Ես ինձ ու ինձ ասացի, որ եթէ վերջին ենթադրութիւնս իրաւացի լինի, նոր ապացոյց կունենամ, թէ նա ինձ սիրում է: Այդ միտքը սիրտս ուրախութեամբ լցրեց և ես վճռեցի այսօր և եթ այդ հարցի պատասխանը գտնել:

Այդ բովէից սկսած կլարայից չէի հեռանում: Աւելի շատ էի խօսում նրա հետ և աւելի քաղցր էի վարւում նրա հետ, քան երբ և իցէ կեանքիս ընթացքում: Գնացինք անտառ, անտառում էլ միշտ նրա հետ էի ման գալիս և միայն ժամանակ առ ժամանակ նպցում

¹⁾ Հին Հռոմակեցոց մէջ մարգարէուհի կանաքը Սիրիլա էին կոչ ունեմ: Թարգմ.

Անելկային, որ գալիս էր քիչ հեռութց Մնեատինսկիների կողքովը: Կլարան հիանում էր անտառից, որ յիրաւի շատ գեղեցիկ էր շնորհիւ առատութեան տերեւախիտ ծառերի, որոնք եղեինների մթագոյն կամարի տակ մի ուրիշ անհամեմատ աւելի ուրախ կամար էին կազմում:

Արեւի լոյսը տերեւների արանքներով առատօրէն թափանցում էր անտառի ներսը և գետնի երեսին բուսնող պտերի (պարօրանք) վրայ ցոլում էր ոսկեկար ու շողշողուն գործւածքի նման: Չորս կողմից լսում էր կկուների ձայնը. տեղ-տեղ ծառքութութը (ճառք) փորում էր փայտը:

Երբ որ մենք միացանք Մնեատինսկիներին ու Անելկային, ես խնդրեցի Կլարայից, որ երբ տուն վերադառնանք, երաժշտութեան վերածի այս անտառը, արեգակը, ծառերի սօսափիւնը և այս ամբողջ գարունը: Կլարան սպատասխանեց, որ իւր սրտի մէջ երգում է արդէն մի ինչ որ Frühlingslied, և որ նա կը փորձի նւագել այդ գարնանային տաղը: Յիրաւի նրա վէմքի արտայացառութիւնից երեւում էր, որ նրա մէջ մի բան երգում է: Խախն ասած՝ նա մեծ տաւիղի նման մի բան է, որ խօսում է միայն հնիւններով:

Կլարայի դէմքը սրացառ էր ու կարմրատակած. Անելկան ընդհակառակը կարծես թմրած լինէր, թէկէ, ինչպէս երեւում էր, ամեն ջանք թափում էր ինքն իրան յաղթելում՝ յետ չը մնալ Մնեատինսկիներից, որոնք չարաճնի երեխանների պէս իրանց տւել էին շարութեան և վերջը այնտեղ հասցրեցին, որ սկսեցին իրար յետելից վաղ տալ անտառում: Կլարան էլ սկսեց հետները վագ տալ, որ չը պէտք է անէր, որովհետեւ նրա պէս ահազգին հասակ ունեցողի շարժումները չէին կարող ճկուն լինել. և իրաք շատ ծիծաղելի էին նրա շարժւածքները, մանաւանդ նրա լայն ազդրների երերալը, որ ուղղակի կոմիկական էր թւում ինձ:

Երբ որ նրանք իրար յետեւից վագ տալով հեռացան, ես ու Անելկան մնացինք մենակի: Խմ տակտիկայի համաձայն ես պէտք է այնպէս անէի, որ նա սկսէր դիսակցել իւր սրտի անհանդատութիւնը, ուստի ասացի նրան:

— Այսօր, ինչպէս տեսնում եմ, մի բան սպատահած պէտք է լինի քեզ, Անելկա. ճիշտ է:

— Ի՞նձ. ոչինչ չի սպատահել:

—Մէկ-մէկ ինձ այնպէս է թւում, թէ զու մի բանից անբաւական ես: Կարելի է քո դուրը չի գալիս կլարան:

—Նա ինձ շատ է զուր գալիս և ինձ ամեննեին չի գարմացնում, որ բոլորը նրանից այդքան հիացած են:

Մեր խօսակցութիւնը ընդհատեց Սնեատինսկիների ու կլարայի մօտենալը: Տուն վերադառնալու ժամանակ էր: Ճանապարհին Սնեատինսկին հարցրեց կլարայից, յիրաւի՞ նա այդքան գո՞ն է Վարշաւագալուց, ինչպէս ասում է:

—Ամենալաւ ապացոյցն այն է, որ ես չեմ մոտածում այսուեղից գնալու մասին, — ուրախ-ուրախ պատասխանեց կլարան:

—Մենք կաշխատենք, վրայ բերեցի ես, որ զուք միշտ մեզ հետ մնաք:

Կլարան չը նացիլով որ առհասարակ ինչ որ ասում են՝ ուղղակի է հասկանում և սովորութիւն ։ ունի լսած խօսքերին կողմանի միտք վերադրել, այս անգամին նայեց ինձ հարցական հայեացքով, յետոյ փոքր ինչ շփոթւած պատասխանեց.

Այսուեղ բոլորը այնքան բարի են դէպի ինձ...

Ես դիտէի, որ ասածիս մէջ փոքր ինչ խաբերայութիւն կար, որովհետեւ իմ խօսքերը կարող էին սխալանքի մէջ դցել կլարային, բայց ես մոտածում էի գլխաւորապէս նրա մասին, թէ ինչ տպաւորութիւն կը զործեն նրանք Անելկայի վրայ: Դժբախտաբար ես ոչինչ չը կարողացայ տեսնել: Անելան հէնց այդ յուղէին սկսեց մէր դցել ձեւնոցի կոճակները և զլոյ խը այնքան քաշ դցեց, որ գլխարկը աշքից բոլորովին ծածկեց նրա դէմքը: Սակայն այդ յանկարծական շարժումը ինձ բարենշան բան թւաց:

Վերադառնք տունն Զօրպեղը ու պանի Յելինան հացը դցել էին տեղ ու սպասում էին մեզ ձաշը տեսեց մինչև երեկոյեան ժամի իննը: Յետոյ կլարան նստեց ածելու և յանպատրաստից յօրինեց ու ածեց իւր «Frühlingslied»-ը: Երկի Պոշովը իւր գոյութեան օրից երեք այդպիսի երաժշտութիւն չէր լսել, բայց այս անգամին ես քիչ էի ուշադրութիւն դարձնում երաժշտութեան վայ, որովհետեւ ուշ ու միտքս բոլորովին գրաւած էր Անելկայով: Ես տեղ ընարեցի նրա կողքին. մենք նստած էինք կիսամթութեան մէջ, որովհետեւ կլարան չը թողեց ձրագ բերեն հիւրասենեակը: Սնեատինսկին ձեռքը շարժում էր նւազապետի փայտի պէս. նրա կինը, որին,

ինչպէս երևում էր, այդ շարժումները խանգարում էին, ժամանակ առ ժամանակ քաշում էր նրա թեքից. Անելկան նստած էր անշարժ: Գուցէ նա էլ ինձպէս խորասուզւած էր իւր մոքերի մէջ և չէր լսում գար նան տաղը: Ես համարեա հաւատացած էի, որ նա այդ բոսպէին մտածում էր իմ ու կլարայի մասին և մանաւանդ աշխատում էր ինքն իրան մեկնել կլարային ասած խօսքերիս նշանակութիւնը: Դժւար չէր ինձ համար հասկանալ, որ թէկուզ նա սկի սիրելիս էլ չը լինէր ինձ, թէկուզ ամենեին չը գիտակցէր էլ, թէ իմ դէպի նա տածած զգացմունքը եղբայրական սէրից աւելի սաստիկ զգացմունք է, այնուամենայնիւ այժմ որ կասկած է տանում, թէ մի ուրիշը կարող է զգիւլ նրան իմ սէրից, նրա սիրուլ լցում է տիրութեամբ, զառնութեամբ ու միայնութեան զգացմունքով: Այն կինը, որ բախտաւոր չէ ամուսնութեան մէջ, փաթաթւում է ամեն մի զգացմունքի, թէկուզ բարեկամութեան զգացմունքին, ինչպէս պատուակը փաթաթւում է ծառին, և վախենում է զըրկմել այդ նեցուկից: Խնձ համար բոլորովին անկասկածելի էր, որ եթէ այդ բոսպէին չըքէի նրա առաջին ու խոստովանելի, թէ միմիայն իրան եմ սիրում, չը նայելով որ այդ նրան սարսափի մէջ կը զցէր, սակայն միևնույն ժամանակը նրա սիրուլ կը լցուէր նաև անսաելի ուրախութեամբ, որ զգում է մարդ, երբ նորից գտնում է մի կորած թանկագին բան: Ճակակ եթէ այդպէս է, — մտածեցի ինձ ու ինձ, լաւ : ի լինիլ արդեօք իսկոյն և եթ խոստովանեմ, հէնց որ միջոց կը գտնեմ նրան որքան կարելի է քիչ վախեցնել և որքան կարելի է շատ ուրախացնել:

Եւ իսկոյն սկսեցի մտածել այդ միջոցի մասին, որից կարող էր կախւած լինել գործի յաջողութիւնը կամ անյաջողութիւնը: Ես հասկանում էի, որ պէտք է այնպէս անել, որ Անելկան զինաթափ լինի և զրկւած լինի ինձ մի անդամ ընդ միշտ ի բաց մերժելու հնաւորութիւնից: Միտքս այդ բոսպէին ծանր էր բանում, որովհետեւ խնդիրը հեշտ չէր: Քիչ-քիչ յուզւում էի ու յուզմունքս քանի զնում սաստկանում էր, և զարմանալի բան է, իմ յուզմունքս աւելի Անելկայի համար էր, քան թէ ինձ համար, որովհետեւ հասկանում էի, որ այդ ահազին յեղաշրջումն կը լինի նրա կեանքի մէջ, և վախենում էի նրա համար:

Սինչ այդ՝ սենեակը աղօտ կերպով լուսաւորւեց. լուսինը բարձրացաւ պարտէզի ծառերի յետերից և տախտակամածի վրայ գցեց չորս պատուհանների պայծառ ցոլքը: Գարնան տաղի ձայները շարունակ հնչում էին դաշիճնում: Սոխակը ծառերի թաւուտից ձայն էր պահում Կլարային և նրա երգը լսում էր ասղակէ բաց դանից: Աքանչելի երեկոյ էր. — գարունը ու լուսինը, երաժշտութիւնը ու սէրը իրար հետ միացած մի հրաշալի ամբողջութիւն էին կազմում: Ակամայից մասածեցի՝ թէ, եթէ կեանքը բախտաւորութիւն չի տալիս, յաճախ տալիս է դէթ պատրաստի շրջանակ բախտաւորութեան համար:

Այդ լուսափայլ մթութեան մէջ սկսեցի աչքերեվս որոնել Անեկայի հայեացքը, բայց նա շարունակ նայում էր Կլարայի վրայ, որ այդ բոպէին միանգամայն ու բւականի տպաւորութիւն էր գործում: Լուսնի շողքը հետզհետէ աւելի ու աւելի խորթափանցելով դաշիճի մէջ, ի վերջոյ լուսաւորեց Կլարային ու դաշնամուրը, և նա իւր բացգոյն հագուստով այդ ժամանակ այնպիսի տեսք ստացաւ, կարծես երաժշտութեան արծաթափայլ ոգի լինէր:

Սակայն տեսիլքը այլ ևս երկար չը տեսեց: Կլարան վերջացրեց իւր գարնան երդը, որից յետոց իսկոյն պանի Սնեատինսկան, որ շտապում էր տուն, վերկացաւ որ գնայ: Սնեատինսկին ու Կլարան հետեւեցին նրա օրինակին: Որոշ հետեւ զարմանալի տաք երեկոյ էր, ևս առաջարկեցի ոտքով գնալ մինչև խճուղին, որ մեր տանից կէս վերստաչափ հեռաւորութիւն ունի: Ես այդ նրա համար արեցի, որ ես ու Անեկան մենակ յետ դառնացինք: Նա չէր կարող հրաժարել հիւրերին ճանապարհ գցելուց, հօրաքոյրս մեղ հետ ի հարկէ չէր դաւ, — կը նշանակի հաշիւս սխալ դուրս գալ չէր կարող:

Պատուիրեցի կառքը առաջուց ուղարկեն և ասեն, որ սպասի մեղ խճուղու վրայ, իսկ մենք էլ քիչ անցած գնացինք կակղիի ծառուղիով, որ Պլոշովի անից տանում է մինչև ճանապարհը: Ես թես տեսցի Կլարային, բայց գնում էինք բոլորս միախումբ, ուղեկցւած Պլոշովի լճակների գորաերի կրկուցով:

Կլարան մի քանի բոպէ կանգ առաւ ու սկսեց ականջ դնել այդ համերգին, որ մերթ լսում էր, մերթ հնչում աւելի ևս բարձրաձայն, և ի վերջոյ ասաց՝

— իմ գարնան տաղի վերջաւորութիւնը:
 — ի՞նչ հրաշալի գիշեր է, բացականչեց Սնեատինսկին:
 Եւ իսկոցն սկսեց ոգել (декламировать) Վենետիկի վաճառա-
 կանից հետևեալ հրաշալի կտորը.

Մի տես, ինչ անոյշ քընած է լուսնի
 Լոյսն այս բլրի վրայ Ե՛կ, նստենք այստեղ,
 Եւ թող հեռակից մեր լսելիքը
 Թափանցէ ձայնը երաժշտութեան.
 Գիշերային լուռ խաղաղութիւնը
 Յարմար է քաղցր ներդաշնակութեան:

Եարունակութիւնը նա չէր կարողանում մտարերել, բայց եռ
 միշում էի և նրա տեղակ վերջացրեցի.

Նայիր, Զէսիկա, նայիր, տես, ինչպէս
 Երկնակամարը ամբողջ սփռած է
 Ուկեղէն փայլուն շրջանակներով.
 Ամենափոքր շրջանը անզամ;
 Որ դու տեսնում ես, իւր ընթացքի մէջ
 Երգում է իբրև հրեշտակ լուսափայլ
 Քերովքէների երկնային պարում:
 Այսպէս լցւած են ներդաշնակութեանը
 Յաւիտենական, անմահ հողիներ.
 Բայց մենք չենք լսում, որովհետեւ մեր
 Հողին ծածկւած է կոպիտ հողեղէն
 Այս հանդերձի տակ ¹⁾:

Կլարան լեհերէն չէր հասկանում, ուստի ես յետոյ ամբողջ
 Հատուածը կրկնեցի ֆրանսերէն իմ սեփական յանկարծակազմ
 թարգմանութեամբ: Նա լսելիս ակամայից աչքերը բարձրացրեց
 վերև, ու վերջը ասաց՝ նայելով աստղերին.

— Ես միշտ հաւատացած եմ եղել, որ բոլոր աստղերը եր-
 գում են:

¹⁾ Թարգմ. Գ. Բարխուդարեանցի. Փորձ, 1879, № II.

Մանօթ. Թարգմ.

Դուրս եկաւ, որ պանի Մնեատինսկան էլ այդ համոզմունքին է եղել. նա պնդում էր մինչև անգամ, թէ ինքը յաճախ խօսել է դրա մասին իւր մարդու հետ, որը սակայն ամենաին չէր կարողանում յիշել, որ երբ և իցէ այդպիսի խօսակցութիւն եղած լինէր իրանց մէջ, Դրանից մարդ ու կողջ մէջ վէճ ծագեց, որի վրա ես ու Կլարան բաւական ծիծաղեցինք, Անելիքան ամրող ժամանակը զբեթէ ամենաին չէր խառնում մեր խօսակցութեանը: Մտքովս անցնում էր, թէ գուցէ այդ թանկագին էակը հոտում է ինձ վրայ նրա համար, որ եմ թեանցուկ եմ արել Կլարայի հետ և զիսաւորապէս նրանով եմ զբաղւած: Այդպիսի բան ենթադրելն իսկ բաւական էր, որ սիրաս լցւէր բերկրանքով: Աշխատում. էի սակայն զլուխս բոլորովին չը կորցնել և մոքումն ինձ ու ինձ ասում էի. «Չուր մի՛ ուրախանալ կարծելով, թէ նա հասկանում է, որ ինքը նախանձից է տանջւում. - մի քիչ տխուր է, գուցէ մի քիչ էլ վիրաւորւած է զգում իրան. զրանից աւելի բան կարծելով զուր կը լինի»: Այդ բուպէին հազար հատ Կլարայի պէս արտիստուհիներ կը տայի, միայն թէ կարողանայի ասել Անելիքային, որ ինչ որ կայչը կայ իմ մէջ, նրան է պատկանում: Մինչ այդ՝ Մնեատինսկին սկսեց խօսել աստղաբաշխութեան մասին: Ես նրա ասածներից հազարից մէկն էի լսում, թէև ասել անգամ չեմ կարող, թէ որքան հետաքրքրում է ինձ այդ գիտութիւնը, որ ըստ իւր էութեան չի կարող ոչ ինքն իրան, ոչ էլ մարդկային ոգուն անհունութիւնից աւելի անձուկ սահման որոշել:

Վերջապէս մենք հասանք ինձուզուն, ուր Մնեատինսկիներն ու Կլարան նստեցին կառքը: Մի բույէ անցած անիւները զդրդացին, մեր ականջին հասաւ վերջին ցտեսութիւնը և ես ու Անելիքան մնացինք մենակ:

Մենք իսկոյն յետ դարձանք դէսի տուն և երկար ժամանակ գնում էինք լուռ ու մունջ: Գորաերի կրկուցը արդէն դադարել էր. միայն հեռախց՝ ագարակի շինութիւններից համար էին մեր ականջին գիշերապահների սուլոցներն ու շների հաջոցը: Ես դիտմամբ Անելիքայի հետ չէի խօսում, որովհետեւ այդ լուռթեան բոպէները կարծես մի տեսակ ապացուց են, թէ իմ ու նրա մէջ ինչ որ մի բան կատարւում է, և Անելիքային մտածել են տալիս այդ բանի մասին: Սակայն վերջը ճանապարհի կիսին ես ասացի.

— Ի՞նչ հրաշալի անցաւ այսօր, չէ:

— Ես վաղուց էր այդպիսի երաժշտութիւն չէի լսել, — պատասխանեց Անելիկան:

— Եւ սակայն կարծես մի բանից տժզոհ լինէիր. ինչ էլ ասես, չեմ հաւատալ, որ ասածս սխալ է: Ես այնպէս ուշադրութեամբ եմ դիտում, թէ ինչ է կատարուում քո մէջ, որ նշմարում եմ քո դէմքի արտայաջառութեան ամենաչնչին նշովը:

— Այսօր դու պէտք է զբաղւէիր հիւրերով... Դու շատ բարի ես, բայց հաւատացնում եմ, որ ինձ ոչ մի անախորժ բան չի պատահել:

— Այսօր, ինչպէս և միշտ ես միմիայն քեզնով էի զբաղւած և այդ ապացուցանելու համար, եթէ թոյլ տաս, կասեմ քեզ, թէ ինչ էիր մտածում ամբողջ օրը:

Ու չը սպասելով նրա թոյլուութեանը, շարունակեցի.

— Դու մտածում էիր, թէ ես մի քիչ նման եմ այն լատիշներին. մտածում էիր, թէ ես քեզ խարում էի, խօսելով ինձ շրջապատող անապատի մասին. մտածում էիր վերջապէս, թէ ես իզուր էի քեզնից մտերմութիւն հայցում, որովհեաւ արդէն ուրիշ տեղ դտել էի հայցածս մտերմութիւնը: Անկեղծ ասա, ճիշտ չէ ասածս Անելիկան պատասխանեց փոքր ինչ դժւարութեամբ.

— Որ անպատճառ ուզում ես... կասեմ... հա, դուցէ և... բայց այդ կարող էր միայն ուրախութիւն պատճառել ինձ...

— Ի՞նչը կարող էր քեզ ուրախութիւն պատճառել:

— Քո ու Կլարայի մտերմութիւնը:

— Գուցէ և սրտանց ցանկանում եմ նրան ամենայն բարիք, բայց այսպէս թէ այնպէս՝ Կլարան, ինչպէս և միւս բոլոր կանայք, օտար է ինձ համար: Իսկ գիտես ինչնու:

Այդ որ ասադի, մարմինս սկսեց մի քիչ դողալ, որովհետեւ տեսայ, որ վճռական բոպէն եկել է. մի փոքր ժամանակ սպասեցի, որ Անելիկան կրկնէր այդ հարցը, ու յետոյ պատասխանեցի, աշխատելով խօսքերը արտասանել շատ հանդիսաւ ձախով.

— Անշուշտ զու ինքդ տեսնում ու գլխի ես ընկնում, որ ես հոգով—սրտով քեզ եմ պատկանում, որ ես միմիայն քեզ եմ սիրել առաջ և այժմ էլ միայն քեզ եմ սիրում ցնորւածի պէս:

Անելկան մեխուածի պէս կանգ առաւ տեղումը; Ես դէմքիս
սառելուց զզացի, որ գունաթափում եմ; Եթէ խեղճ Անելկան
քիչ էր մնում գետինը մոնէր այլ բռնպէին, չէ որ ես էլ հոգի
ունէի Բայց լաւ գիտենալով, թէ ինչպիսի կնոջ հետ գործ ունեմ;
ես պէտք է շտապէի, որպէս զի նրան զինաթափ անէի, քանի գեռ
նա ուշքի չէր եկել ու ինձ ի բաց մերժել

Աւատի սկսեցի արագ-արագ ասել.
—Մի պատասխանիր ինձ, որովհետեւ ես ոչինչ չեմ ուզում,
ոչինչ չեմ խնդրում,—ոչինչ, լսեմ ես: Ես միայն ուզում էի քեզ
ասել, որ դու գրաւել ես կեանքս և որ կեանքս այժմ քեզ է պատ-
կանում: Անշուշտ դու ինքդ էլ նկատած կը լինես այդ, այնպէս, որ
իմ ասելովս ոչինչ չաւելացաւ Ելի կրկնում եմ, ես ոչինչ չեմ տես-
չում, ոչինչ չեմ սպասում: Դու ինձ վանել չես կարող, որովհետեւ
ես ինքս եմ յեռ քաշուում... Ես յայտնում եմ քեզ այդ միմիայն
այնպէս, ինչպէս կը յայտնէի մտերիմ լնկերոջս, քրոջս: Ես գոյիս
եմ ու դարձս բաց եմ անուշ քո առաջ, որովհետեւ չը կայ մի ու-
րիշը, որի առաջ կարողանացի բանալ սիրտս, գալիս եմ ու ասում
եմ քեզ, որ սեացել է բախտս, որովհետեւ ես սիրում եմ մի
ինոջ, որը պատկանում է ուրիշին, և սիրում եմ ցնորւածի պէս,
Աներիա ջան, անսահման սիրով:

Արդէն դարսասի մօտ էինք, բայց զեռ չէինք դուրս եկել
ծառերի խորը խաւարից։ Մի բռպէ ինձ թւաց, որ նա ցօղունակ
տուր ծաղկի նման կը թեքւի դէպի ինձ և ես զիրկս կառնեմ նրան,
բայց սխալւեցի։ Անելկան ազատուելով խօսքերիս առաջին տպաւո-
րութիւնից, յանկարծ սկսեց կրկնել մի տեսակ ներդայոց եռան-
գով, որ նրանից երբէք սպասել չէի կարող։

— Ես այդ շեմ ուղղում լսել, Ահօն. շեմ ուղղում, շեմ ուղղում,
շեմ ուղղում:

Ու շտագով մտաւ լուսնեակով լուսաւորւած բակը, կամ ճիշտ ասած փախաւ. ինձնից, իմ խօսքերից ու խոստովանութիւններից: Մի բոյէ անցած նա անհետացաւ պատշզամբում, իսկ ես մնացի մենակ անհանգստութեան ու երկիւղի մէջ, սաստիկ խղճալով նրան, բայց միևնոյն ժամանակ յաղթական ուրախութիւն զգալով, որ այն խօսքերը, որոնցով մեզ երկուսիս համար սկսում է նոր կեանք, ար-

դէն արտասանւած են: Ես լաւ գիտէի, որ ինչ էլ լինէր՝ միանգամից դրանից աւելի ոչինչ չէի կարող սպասել, մինչդեռ այդպիսով այն սերմը, որից մի բան կարսղ էր բուսնել, գցւեց հողի մէջ:

Տուն որ վերադարձայ Անելկային այլ ևս չը տեսայ: Տեսայ միայն հօրաքրոջս, որ սենեակում տէրողորմեան ձեռքին ման գալով քթի տակին աղօթքներ էր ասում ու մէջ է մէջ էլ ինքն իրան բարձրաձայն խօսում: Ես իսկոյն մնաք բարե ասացինրան, որպէսզի որքան կարելի էր շուտ գնայի իմ սենեակը: Մտածում էի, որ այսօրւան տպաւորութիւններիս գրի անցնելը կը հանգատացնի սիրաս և ցրւած մոքերս կարգի կը բերի: Բայց ընդհակառակը աւելի ևս տանջւեցի: Վճռել եմ վաղը (կամ աւելի ծիշով այսօր, որովհետեւ դուրսը արդէն լոյս ցերեկ է) գնալ Վարշաւա: Ուզում եմ որ Անելկան աւելի հաստատւի այն համոզմունքի մէջ, թէ ես ոչ մի բանի չեմ ձգտում, և որ զիսաւորն է ժամանակ ունենայ հանգատանալու ու ընտելանալու այն բանին, որ ես նրան ասացի: Սակայն ճիշճան ասած այդպէս վճռելուս պատճառը մասսամբ էլ այն է, որ վախենում եմ վաղը նրա հետ ունենալիք տեսակցութիւնից և ուզում եմ այնպէս անել, որ աւելի ուշ հանդիպենք իրար: Մէկ—մէկ ինձ թուում է, թէ մի չը լսւած յանցանք եմ գործել, ներմուծելով իմ բարոյական ապականութեան տարրը այդ ցարդ անարատ աշխարհ: Բայց իսկն ասած հիմնական չարիքը չի կայանում արգեօք նրանում, որ նա պասկել է մի մարդու հետ, որին չի սիրում և չի կարող սիրել: Ի՞նչն է աւելի անբարոյական, — իմ սէրը, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ բնութեան մեծ օրէնքի արտայացառութիւն, թէ Անելկայի այդ մարդուն պատկանելը, որ այդ օրէնքի քստմնելի ուսնակոխումն է: Ամենախսիս օրինական կապը իսկապէս անարդ կապ է, եթէ որ չի հիմնած սիրոյ զգաց հունքի վրայ: Եւ սակայն ես, որ այդ հասկանում եմ, անքան թույլ եմ, որ սարսափում եմ, երբ ոլէտք է լինում հրել՝ դէն զցել այդ մեռելալին բարոյագիտութիւնը: Բարեբախտաբար այդ երկիւղը բոպէական է: Եթէ մինչեւ անգամ հաւատացած էլ չը լինէի, թէ արդարութիւնը իմ կողմն է, յամենայն դէղս բոլորին անկասկած է ինձ համար, որ արդարութիւնը հակառակորդիս կողմը չէ: Վերջապէս խզմն անքիս այդ նախապաշտամենները ջարդ ու փշուր է անում մի հատիկ և իրում եմք խօսքի իրական ոցքը:

Իսկ եթէ սիրոս հրճւում է երբ որ մտածում եմ թէ գուցէ նա էլ այս բոպէիս քնած չէ, լաց է լինում ու մտատանջւում է, այդ միայն մի նոր ապացոյց է, որ ես նրան սիրում եմ: Արդ այդ-պէս լինելուց յետոյ այն բոլորը, ինչ որ կատարւում է ու կատար-ւելու է, անհրաժեշտ է ու չի կարող չը կատարւել:

19 մավասի.

Վարշաւա որ եկայ, առաջին օրը մեռելի պէս քնեցի: Պլո-շովում ափսոսս է գալիս օրւայ ամեն մի բոպէն, որ ես կարող եմ անց կացնել Անելկայի հետ, իսկ գիշերները գրում եմ: Ի վերջոյ այդ բոլորը ինձ սաստիկ յոգնեցրեց: Հիմա էլ զեռ զգում եմ, որ դլուիս ծանրացած է, բայց գոնէ կարողանում եմ մտածել: Մի քիչ ամաչում եմ, որ Պլոշովից փախայ և թողեցի Անելկային իս խոստովանութեան ճնշման ներքոյ, բայց սիրած կնոջ հետ վարւելիս մի քիչ փախկոտութիւնը վնաս չունի: Ասենք երևի էլի չէի փախչիր, եթէ այդ չը պահանջէին սիրոյս շահերը: Այժմ մի քանի օր շարունակ, առաւոտը վեր կենալիս, հայրը մերժ-ն ասելիս, պար-տէզում ման գալիս և հիւանդ մօրը խնամելիս, Անելկան ուղի-չուզի պէտք է ինքն իրան կրինի՝ ճնա ինձ սիրում է, և քանի գնայ այդ միտքը անհրաժեշտօրէն նրան աւելի քիչ անհեթեթ, աւելի քիչ սարսափելի կը թւայ: Մարդկային ընաւորութիւնը ամեն բանի ընտելանում է, իսկ կինը շատ շուտ է հաշտուում այն մտքի հետ, թէ իրան սիրում են, մանաւանդ երբ որ ինքն էլ սիրում է: Այն հարցը թէ արդեօք սիրում է նա ինձ, ես ինքս ինձ առա-ջարկեցի հէնց առաջին բոպէին, երբ ինձ ու ինձ խոստովանեցի, որ ես սիրում եմ նրան: Այն ժամանակւանից սկսած այդ հարցը գլխում ամեն կողմի վրայ շուռ եմ տալիս, աշխատում եմ քննել բոլոր հանգամանքները, այնպէս՝ կարծես ինձ վերաբերւելիս չը լինի, և զալիս եմ այն համոզմունքին, որ նա ինձ սիրում է: Մարդի գնալիս նա ինձ է սիրելիս եղել և ոչ կրօմիցկուն, իսկ համաձայն-ւել է նրա կինը դառնալ՝ սրաի յուսահատութիւնից: Եթէ գոնէ սո-վորականից բարձր մարդ առնէր, որ կարողանար գրաւել նրան իւր փառքովը կամ դաղափարներովը, եթէ նա հանդիպէր արտակարդ ընաւորութեան տէր մի մարդու, այն ժամանակ գուցէ ինձ մոռա-

նար: Բայց հօ կրոմիցկին չէր կարող գրաւել նրան իւր դրամական նեւրոզով: Բացի այդ նա հարսանիքից յետոյ շատ շանցած գնաց այստեղից: այդ էլ մի կողմը թողնենք, նա ծախեց Գլուխովը, որ այդ երկու կանանց կեանքի նպաստին էր: Կրոմիցկու մասին ամենաօբյեկտիւ կերպով որ գատելու լինենք, նա փոքրիկ մարդ է և նրա մէջ չկայ ոչ մի բան, որով նա կարողանար գրաւել այդ իդէալական զգացումներով ու խանդերով լի էակի սիրալ: Այդ միջոցին եկայ ես, դէսի որը նա սէրը հաւանօրէն դեռ ևս չէր հանգել, և հէնց առաջին օրից սկսեցի ներգործել նրա սրտի վրայ թէ յիշողութիւններով, թէ իւրաքանչիւր խօսքով, ամեն մի հայեացքով, ես գրաւում էի նրան ոչ միայն այն վարպետութեամբ, որ մարդ ձեռք է բերում կեանքի փորձառութիւնից, այլ և գլխաւորապէս այն մազնիսական ոյժով, որ տալիս էր ինձ իմ սրտումն էլ տանձուղ խփական սէրը: Աւելացնելով դրա վրայ և այն, որ Անեկան զիտեր թէ որքան տաննջւում էի ես նրա վճռի շնորհիւ այն ժամանակ, երբ ուղարկեցի նրա մօտ Անեատինսկուն, և որ նա անշուշտ խզձում էր ինձ ու մինչև այսօր էլ խզձում է, ես ասում եմ ինքս ինձ.— կեանքս եմ խաղի դրեւ բայց այնպիսի պայմաններում եմ խաղում, որ տարւել չեմ կարող:

Ես արդար եմ, որքան արդար է ամեն մարդ, որ պաշտպանում է իւր կեանքը: Ես այս ասում եմ ոչ թէ բուռն զգացմոնքի ազդեցութեան տակ, այլ հանդիսաւ կերպով դատելով: Ես ոչինչ չունեմ, ոչ համոզում, ոչ հաւասար, ոչ սկզբունք և ոչ պատւանդան ոտներիս տակ, որովհետեւ քննադատութիւնն ու բեմբեքսիան մաշել ոչնչացրել են իմ մէջ այդ բոլոր յենարանները: Ես ունեմ միայն բնածին կենսական ոյժեր, որոնք ուրիշ ելք չը գտնելով կետրօնացել են՝ դէսի այդ կինը զգացած սիրոյս մէջ: Եւ ես պիհնդ բռնել եմ այդ զգացմոնքից, ինչպէս խեղդւողը բռնում է տախտակից: Եթէ այդ էլ չը լինի, ես այլ ևս չեմ կարող ապրել: Երբ խելքս հարցնում է ինձանից՝ ինչմէ ես ուղղակի շամուսնացայ Անելկայի հետ, ես նրան պատասխանում եմ այն, ինչ որ մի անդամ արդէն ասել եմ:— ուղղակի չամուսնացայ նրա համար, որ ես ուղիղ չեմ, այլ ծուռը: Այդպէս են դայեկել ինձ երկու դայեակները— բեմբեքսիան ու քննադատութիւնը: Ինչո՞ւ է այդ կինը և ոչ մի ուրիշը

դարձել ինձ համար վերջին ապաւէն, չը գիտեմ Նրեի հէնց նրա համար, որ դա է դարձել և ոչ ուրիշը։ Այդ ինձնից կախւած էի եղել։

Եթէ նա այժմ ազատւէր, ես ձեռաց առանց տատանւելու նրան կառնէի, բայց եթէ նա ամենւին մարդու գնացած չը լինէր... ով գիտէ... ամաչում եմ խոստովանւել, բայց գուցէ աւելի պակաս տենչանք զգայի դէպի նա:

Եւ այդպէս կը լինէր ոչ թէ որ և է ռոմանատիկական հայեացք-ների շնորհիւ, ոչ թէ նրա համար, որ ես ամուսնութիւնը կեանքի լիօրեայ պրոզա կը համարէի Ոչ։ Այդ տեսակ հայեացքներ ինձ ծիծաղելի են թւում։ Սակայն հիմնւելով կատարւած իրողութիւնների վրայ, ենթադրում եմ, որ այն ժամանակ ես կ'սկսէի անվերջ կերպով քննել ու զննել թէ ինձ և թէ Անելկային, մինչև որ մէկն ու միկը ձեռիցս կը թոցնէր նրան։

Ձեմ ուզում դրա մասին մտածել, որովհետև եթէ մտածեմ, անշուշտ պէտք է ինքս ինձ անիծեմ։

20 մալիսի.

Այսօր միտք էի անում, թէ ինչ կը լինի, երբոր զրաւեմ Անելկայի փոխադարձ սէրը և մանաւանդ հասցնեմ նրան այնտեղ, որ խոստովանւի թէ սիրում է ինձ։ Տեսնում եմ առաջիս երջանկութիւն, բայց չեմ տեսնում որ և է բան, որ կարելի լինէր անել ինձ թւում է, որ եթէ Պլոշովում այդ կանանց ներկայութեամբ արտասանեմ ապահարզանց խօսքը, գետինը կը պատռակի ու մեզ տակովը կանի։ Դրա մասին խօսք անդամ չի կարող լինել, որովհետև հօրաքըլըս ու պանի Յելինան, այնպիսի գաղափարների տէր են, դարդամահ կը լինեն, եթէ Անելկան բաժանվի մարդուց։ Անելկայի վերաբերմամբ էլ ինքս ինձ չեմ խարում։ Նրա հասկացողութիւններն էլ այդ պառաւների հասկացողութիւնների տեսակ են։ Եւ սակայն հէնց որ նա խոստովանւի թէ ինձ սիրում է, ես կարտասանեմ այդ խօսքը, և նա պէտք է ընտելանայ ապահարզանի մտքին։ Ուրիշ ելք չը կայ, իսկ այդ միակ ելքի համար պէտք կը լինի սպասել մինչև հօրաքըլըս ու պանի Յելինայի մահը։ Դրանից աւել ոչինչ չի մնում անել Կրոմիցկին կամ կը համաձայնի յօ-

ժարակամ, կամ ոչ: Վերջին դէպքում ես Անելիային կը վերցնեմ կը տանեմ թէկուզ Հնդկաստան, իսկ ապահարզանը կամ որ նոյնն է ամուսնութեան ոչնչացումը զլուխ կը բերեմ նրա կալքի հակառակ: Բարեբախտաբար նիւթականի կողմից պակասութիւն չունեմ: Գալով ինձ, ես ամեն բանի պատրաստ եմ և այդ ներքին խորին համոզմունքս ինձ բոլորովին արդարացնում է խղճիս առաջ: Այս անդամին ինձ յուզողը սովորական դատարկ բոման չէ, այլ մի զգացմունք, որի մէջ կետրոնացած է իմ ամբողջ էութիւնը: Այդ զգացմունքի անկեղծութիւնը և ոյժը արդարացնում են նոյնպէս և իմ վարմունքը Անելիայի հետ: Ես գիտեմ, որ խարում եմ հաւատացնելով նրան թէ ոչինչ չեմ ցանկանում, բայց այդ բոլորը շարամիտ խարէութիւն կը լինէր միայն այն դէպքում, եթէ սէրս ինքը խարեբայութիւն լինէր, բայց քանի որ սէրս կեղծ չէ, այդ միմիայն զգացմունքի տակտիկա, զգացմունքի դիւանազիտութիւն է: Այդ մտնում է սիրոյ պրոցեսսի մէջ: Յայսնի է, որ մինչև անդամ նշանւածներն էլ զանազան խորամանկութիւններ են բանեցնում իրար յերանից սիրոյ խոտովանութիւն դուրս քաշելու համար: Գալով ինձ, ես անկեղծ եմ մինչև անդամ այն ժամանակ, երբ սուտ եմ ասում:

21 մալիսի.

Ես Անելիային ասացի թէ ուզում եմ մի գործով պարապել, և յիրաւի ուզում եմ, թէկուզ հէնց այն պատճառով, որ նրա առաջ սուտ դուրս չը գամ: Վճռել եմ ամենից առաջ հօրս հաւաքածուները Վարշաւա փոխադրել ու այսուեղ հիմնել Պլոշովսկիների թանգարանը: Այդ Անելիայի բարի վաստակը և մեր սէրից յառաջացած առաջին օգտակար գործը կը լինի: Նախատեսում եմ, որ խոտական կառավարութիւնը իմ դէմ խոչնդուներ կը լարուցանի, որովհետեղ այնտեղ մի օրէնք կայ, որը արգելում է Խոալիայից դուրս տանել զանազան հնութիւններ ու գեղարւեստական թանկագին կերուածներ: Բայց այդ փաստաբանիս գործն է: Այս, յիշում եմ, որ այն Սասոռիներատոցի Մադոննան էլ, որ հայրս կտակել է իւր ապագայ հարսին, գտնուում է իմ հաւաքածուի մէջ: Կը սպառւիրեմ այդ սկատկերը խոկոյն ուզարկեն, նա ինձ այսուեղ պէտք կը դայ:

22 Մահմիւ,

Խնչքան շարասիրտ արարած է մարդու Խնչ ու զում էք ասէք, բայց այդ պարոն Կրոմիցկին, որ միլիօններ վաստակելու համար ջհաննամի ծայրն է հասել ու քիչ է մնում սկսի գլխի վրայ ման դաշ, այն ժամանակ երբ այստեղ նրա կնոջ ականջին սիրոյ խօսքեր են շշնջում, —ինձ ծիծաղելի է թւում. սիրտ հրճում է, երբ որ մտածում եմ, թէ այդ բանը պէտք է Անելկայի մտքովն էլ անցնի, իսկ եթէ չ'անցնի, ես էլ ինչացն եմ այստեղ, որ գըլիսի չը քցեմ նրան, Կրոմիցկու պատիկերը ոտից գլուխ հիսնալի երեսում է նրանում, որ Գլուխովը ծախեց և Անելկային ու մօրը սեփական յարկից զրկեց... Անշուշո նա մտածելիս է, եղել թէ Օդլսապում կամ Կիևում կը կինան, սակայն բանը այնպէս գնաց, որ պանի Ցելինան հիւանդացաւ ու Անելկան ստիպւած եղաւ գալ Պլոշով։

Բայց չէ որ նա զիտէր, թէ որքան թոյլ է պանի Յելինայի առողջութիւնը, և հետևաբար նա պէտք է նախատեսէր, որ զոքանչո կարող է ծանր հիւանդանալ և որ այն ժամանակ Անելկան կը մնայ մենակ և վշտերի ու հոգաերի ծանրութեան ներքոյ; Գուցէ նրա գործերը անհրաժեշտ պահանջում են նրա ներկայութիւնը հեռաւոր Արևելքում, բայց որ այդպէս է, ինչմու էր պսակւում։

Վաղը գնում եմ Պլոշով։ Այստեղ կարօտը սաստիկ տանջում է ինձ, համ էլ ուզում եմ Անելկայի աչքերին ուղիղ նայեմ, թէ չէ մէկ-մէկ ինձ այնպէս է թւում, թէ փախել եմ վախենալով պատասխանատութիւնից։ Խոստովանութիւնից յետոյ պէտք էր հեռանալ անյոտեղից, բայց այժմ պէտք է վերադառնալ։ Ով է իմանում, գուցէ աւելի բախտաւոր եմ, քան կարծում եմ, գուցէ նա էլ իմ կարօտն է քաշում...

Այսօր եղել եմ Անեատինսկիների մօտ, Կլարայի մօտ, որին տանը չը գտայ, և այստեղի հոչակաւոր գեղեցկուհի պանի Կորիցկայի մօտ։ Վերջինս կրում է իւր պատմական անունը ժոկէի գլխարկի պէս, իսկ սրախօս լեզուն՝ մտրակի պէս, որով աջ ու ձախ դադղում է ծանօթների երեսները։ Բայց ես դուրս եկայ նրա մօտից առանց կապտած տեղերի, — ընդհակառակը ես արժանացայ փոքր ինչ կոկետ վերաբերմունքի։ Մի քանի այցելութիւններ էլ արեցի

այցելումներ թողնելով։ Ուզում եմ բոլորը իմանան թէ ընդ միշտ բնակութիւն եմ հաստատում Վարշաւայում։

Որովհետեւ հօրս հաւաքածուների տեղափոխելը ինձ գոհացնել չի կարող, քանի որ այդ դործ չէ, այլ մի հարց, որի վճռելը կախւած է կամքիցս ու քսակիցս, ուստի ինձ ու ինձ միտք եմ անում, թէ բացի այդ ինչ կարող եմ անել։ Մեզնում իմ վիճակի մարդիկ ընդհանրապէս բաւականանում են իրանց կալւածների կառավարութեամբ, որ, ի միջի այլոց ասած, շատ քիչ բացառութեամբ վատ, ինձնից հազար անգամ վատթար են անում։ Մեզնից հազարից մէկն է միայն հասարակական կեանքում որ և է դեր խաղում։ Վերը արդէն ասել եմ, որ մարդիկ այստեղ դեռ արիստոկրատիա և գեմոկրատիա են խաղում, այնպէս որ մեր մէջ կան այնպիսիները, որոնք իրանց կեանքի նպատակն են դարձրել կուել դեմոկրատական հոսանքների դէմ և պաշտպանել հասարակական երարխիան։ Գալով ինձ, ես այդ նոյնքան լաւ սպորտ եմ համարում, որքան միւս ամեն տեսակ սպորտները, բայց որովհետեւ սպորտամէն չեմ, այդ խաղին մասնակցել չեմ կարող։ Եթէ մինչև անգամ այդ՝ խաղ չը լինէր, եթէ դրա մէջ որ և է գործնական միտք լինէր, ես էլ չէի կարողանալ յարել այդ բանակներից մէկնումէկին, որովհետեւ երկուսին էլ չափից վեր սկեպտիկարար եմ վերաբերում։ Դեմոկրատներին ջղերս չեն տանում, — այսինքն ոչ թէ ռամիկ ծագումով մարդկանց, այլ նրանց, որոնք իրանց սպորտաւոր դեմոկրատ են համարում։ Արիստոկրատիացի մասին մոտածում եմ, որ եթէ իրօք նրա raison d'être-ը հիմնում են նախնիքների պատմական ծառայութիւններից վրայ, այդ ծառայութիւններից շատերը այն տեսակ են, որ ժառանգները պէտք է քուրք հազնեն ու գլխներին մոխիր ցանեն։ Եվ վերջոց իսկն ասած այդ բանակները իրանք իրանց չեն հաւատում, բացի զուցէ մի քանի չափից վեր յիմար անհատներից։ Ոմանք անկեղծ են ձեւանում անձնական նկատութիւններով, բայց քանի որ ես ոչ մի բանում չեմ կեղծում, կը նշանակի այդ տեսակ կուի մասնակցելը իմ բանը չէ։

Կան նաև սինթէտիկներ, ինչպէս Մնեատինսկին, որոնք երկու բանակիցն էլ բարձր են կանգնած և պատրաստ են ձուլել երկու

բանակները իրանց սինթէզի մէջ։ Դրանք ընդհանրապէս կորովի մարդիկ են, բայց թէկուզ նրանց աշխարհահայեացքն ընդունէի էլ, պէտք է բացի այդ էլի մի բան անէի, որովհետեւ զգացմունքը ինքն ըստ ինքեան գործ չէ, զգացմունքը պէտք է մի կերպ ակներև ձեռվ արտայալսել։ Այ օրինակ Սնեատինսկին - գրամաներ է գրում։ Խաղը, իրերի զրութեանը մօտիկից որ նայում եմ, տեսնում որ ես մի տեսակ՝ փակագծից դուրս եմ և չեմ իմանում ինչպէս մանեմ մէջը։ Խնչ էլ ասէք տարօրինակ բան է, որ մեծ կարողութեան, կրթութեան, քիչ թէ շատ ընդունակութիւնների ու կամքի տէր մի մարդ չի իմանում ինչ կործի կպչի։ Դարձեալ ուզում եմ ինքս ինձ անիծել, որովհետեւ տեսնում եմ, որ զրա պատճառն էլ այն է, որ հոգիս չափից աւելի է նրբացած։ Խնձ վրայ պէտք է որոշեն մեր դարի և քաջաքակրթութեան ծերունական հիւանդութիւնը, որովհետեւ իմ մէջ այդ հիւանդութիւնը տիպալին բնաւորութիւն է ստացել։ Ով որ սկէպտիկաբար է վերաբերում զէպի հաւատը, գէպի գիտութիւնը, պահպանողականութիւնը, յառաջադիմութիւնը և այլն, նրա համար յիրաւի դժւար է որ և է գործ կատարել։

Խակ դրան դեռ աւելանում է և այն, որ իմ տենչանքներս անհամեմատ աւելի զօրեղ են, քան նրանց բաւականութիւն տալու միջոցներս։ Ամէն տեղ կեանքը հիմնւած է աշխատանքի վրայ, այստեղ էլ մարդիկ աշխատում են. խօսք չունեմ դրա դէմ։ Բայց այդ՝ լծի ձիերի աշխատանք է, որոնք տաժանանքով խրձերը կալն են կրում։ Ես որ ուզեմ էլ՝ այդ չեմ կարող անել։ Ես հանդէսի ձի եմ, — գուցէ և կարողանալի մի որ և է կառք քաշել, բայց սովորական սալլ աւազոտ ճանապարհով ամէն մի քսոստ ձի ինձանից համ լաւ կ'քաշի, համ հանգիստ ծուն շինելիս աղիւս կրել ոչ մի կերպ չէի կարողանալ. գուցէ պէտք գայի շէնքը զրւագներով զարդարելու համար. զժբախտաբար երբ հարցը սովորական շէնքի ու ծածկի մասին է, այդպիսի վարպետների պէտք չ'կայ։

Ասենք եթէ որ ներքին հակումն զգացի դէպի աշխատանքը կամ ցանկանայի մի որ և է բան անել Սնեատինսկու դաւտնանքների ազգեցութեան ներքոց, ես ինձ կ'հարկադրէի պարասել մի որ և է հասարակ դոծով։ Բայց իսկապէս ինձ համար նշանակու-

թիւն ունի լոկ արտաքին կողմը: Ես ուզում եմ աշխատել այն պատճառով, որ այդ կ'շահի սիրածս կնոջ սիրաը: Անելկան այդ կողմից շատ գրաւող է և դիտեմ որ այս անոտարակոյս նրա սիրաը կ'շահի: Բայց հէնց այդ պատճառով թէ ինքնասիրութիւնս և թէ շահերս սոիպում են ինձ այնպիսի աչքի ընկնող տեղ գրաւել, որը ինձ նրա աչքում կարողանար բարձրացնել: Տեսնեմ պէտք է զեռ չօրս կողմն մի լաւ դիտեմ: Խսկ առ այժմ թող գործի իմ քսակը: Կ'փոխադրեմ հօրս հաւաքածուները, կ'սկսեմ օգնել զանազան հիմնարկութիւնների ու փող տալ ում հարկաւոր լինի:

Զարմանալի է Անելկայի պէս կանանց ազդեցութիւնը: Օրինակ հէնց այս. հանդիպում է նրան մի կատարեալ «անսլորտիեզը» հանճարը, մի այնպիսի չափից վեր անշահ մարդ, ինչպէս ես եմ,— և հանդիպելուն պէս առանց որ և է դրդման ու քարոզութեան նրա կողմից, սկսում է զգալ զանազան պարուաւորութիւններ ու ձգուումն դէսի հազար ու մի գործ, որոնց վերաբերացը առաջ ոչինչ չէր զգում, թող սատանայի բաժին լինեմ, եթէ մոքովս անդամ անցնի շահել մի պարիզեցի կամ վիկնացի կնոջ սիրու հաւաքածուիս Պարիզ կամ Վիեննա փոխադրելովը:

Գնում եմ Պլոշով, շտագում եմ բարի հրեշտակիս մօտ:

25 մալսի.

Մասամբ նրա համար առ ժամանակ հեռացայ Պլոշովից, որ Անելկան ժամանակ ունենար որ և է վճիռ կայացնելու: Վարշաւայում և Պլոշով յետ դասնալիս՝ ճանապարհին ևս աշխատում էի զուշակել թէ ինչ վճռած կ'լինի: Ես դիտեի, որ չէր կարող մարդուն ուզդակի զբել, թէ Ալրի, ինձ վեր կալ տար, որովհետեւ Պլոշովսկին ինձ հանդիսաւ չի տալիս իւր սէրովլը: Նա այդ չէր անիլ, եթէ մինչև անդամ ատելիս-էլ լինէր ինձ: Նրա պէս նուրբ ու քնքոյշ հողու աէր մարդիկ անընդունակ են այդպիսի բանի: Ել չեմ ասում, որ եթէ ացդպէս վարւէր, անշուշտ իմ ու Կրոմիցկու մէջ ընդհարումն աեղի կունենար, ինքը սոիպւած կ'լինէր թողնել հիւանդ մօրն և գնալը որովհետեւ պանի Յելինան այնքան տկար է, որ չի կարող Պլոշովից հեռ անալ:

Անելկայի գրութիւնը արդարեւ դժւար է և ես այդ հաշուի

էի առել նախ քան խոստովանւելս: Բայց Պլոշով յետ դառնալիս վախենում էի, մի գուցէ խելքը մտնի փակւել մօր սենեակում և ըստ կարելոյն խոյս տալ ինձանից: Սակայն շուտով հանգստացայ: Գիւղում, այն էլ մի յարկի տակ, այդ միանգամայն անհնարին բան է, և յամենայն դէպս շատ ակներեւ կ'լինէր ու կ'գրաւէր հօրաքրոջ ու պահի Յելինայի ուշադրութիւնը, այնուհետեւ զանազան կասկածների տեղիք կ'տար ու. կարող կ'լինէր վատ ազգել վերջինի առողջութեան վրայ:

Ճիշտն ասած, առանց խղճահարութեան օգտւում եմ նրա դրութիւնից, բայց մը սիրահարւած մարդը չի օգտւում հանգամանքներից: Ես գիտէի, այդ Անելիան, թէ կուզ սաստիկ սիրելիս էլ լինի ինձ, չի ուզիլ թոյլ տալ, որ ապազայում կրկնեմ խոստովանութիւնս և մինչեւ անգամ շատ աւելի սաստիկ կ'գիւմադրի քան սովորաբար դիմադրում են մարդասէր կանացք, որովհետեւ նրա պէս սկզբունքներ ունեցող ու նրա չափ համեստ կնոջ աչքում ամէնաշնչին զիջումն անդամ զարհուրելի մեղք կերեւեայ: Բայց ինչպէս կարող էր արգելել ինձ խօսել իւր հետ իմ սիրոյ մասին: Նրա ձեռքին դրա համար մի միջոց կար միայն—ստանալ իմ յօժարակամ համաձայնութիւնը Ենթադրում էի, որ կը ցանկանայ վճռական կերպով խօսել ինձ հետ, ու չէի սիալւում:

Աերջապէս հասայ Պլոշով: Անելիան լզարել էր, բայց ինձ նայում էր բաւական անվեհեր կերպով: Նրեւում էր, որ խեղճիկը պատրաստել էր զանազան ապացոյցներ ու հաւատում էր այդ ապացոյցների զօրութեանը. հաւատում էր, որ հէնց որ այդ փաստերը մէջ ըերէր, ինձ ոչինչ չէր մնալ անելու, բայց եթէ լեզուս ինձ քաշել ու լնդ միշտ լսելի Հքեշատիկալին մոլորութիւն, թէ աշխարհիս երեսին միմիայն մի ճշմարտութիւն կարող է լինել: Ինձ հետ ոչ մի վիճաբանութեան մի բռնւիլ, իմ Անելիաս, որովհետեւ եթէ կան որ և է ճշմարտութիւն ու ապացոյցներ, որոնց ևս քչից-շապից հաւատում եմ, այդ՝ սիրոյ ճշմարտութիւնն ու իրաւունքներն են, և բացի դրանից այնքան ճարպկութիւն ունեմ, որ կարող եմ քո բոլոր ապացոյցները ձեռնոցի պէս շուռ տալ ու զէնք դարձնել քո դէմ: Քեզ չեն փրկիլ ոչ քո դատողութիւնները, ոչ իմ խղճալլքո վրայ, որովհետեւ որքան աւելի մաքուր, որքան աւելի կատա-

րեալ ու հրեշտականման երևաս, որքան աւելի յուղես ինձ, այնքան աւելի կը սիրեմ քեզ, իսկ որքան աւելի սիրեմ, այնքան աւելի տենչալի կը լինես ինձ համար Փեղ համար ես ունեմ միայն կոկորդիլոսի տրտասունքներ, որոնք հոսելով միեռոյն ժամանակը գրգռում են իմ գիշակեր ձգտութիւները։ Այդ սիրոյ կախարդած շրջանն է։

Անելկային տեսնելուն պէս ինձ զգացի այդ շրջանում իմ վերադառնալուս օրը, կէսօրից յետոյ, երբ պանի Յելինան խոր քնեց պատշգամբում, Անելկան ինձ նշան արեց, որ յետելիցը գնամ պարտէզի խորքը, նրա դէմքից, որ զարմացրեց ինձ իւր անսովոր լրջութեամբ, ես հասկացայ, որ այդ բովէն է ընտրել հետո խօսելու համար, ուստի շտապով գնացի նրա յետելից։ Սակայն որքան հեռանում էինք պատշգամբից, Անելկայի քաջութիւնը հետզհետէ անհետանում էր, նկատեցի, որ գունատւել էր. անկներե էր, որ նրան վախեցնում էր իւր սեփական եռանդը, բայց յետ նահանջել այլ ես անհնար էր, ուստի սկսեց խօսել անհաստատ ձայնով։

—Եթէ իմանալիր որքան անբախտ էի ես այս քանի օրս...

—Կարծում ես, ես շմար բախտաւոր եմ զգում ինձ, պատասխանեցի ես։

—Զէ, չեմ կարծում, և այդ պատճառով քեզնից մի մեծ խնդիրք ունեմ... ևս գիտեմ, որ զու ամեն բան հասկանում ես, որ զու մեծահոգի ու բարի ես, և հաւատացած եմ, որ խնդիրքս չես մերժիլ. հաւատացած եմ, որովհետեւ քեզ ճանաչում եմ։

—Ասա, Բ'նչ ես ուզում։

—Դու պէտք է, Լէօն, գնաս այսոեղից արտասահման և չը վերադառնաս, մինչև մայրիկը այնքան լաւանայ, որ կարողանայ Պլշովից հեռանալ։

Ես առաջուց գիտէի, որ այդ է պահանջելու, բայց մի քանի վայրկեան լուս կացայ, որպէս թէ մոքումս պատասխան էի փնտում։

—Դու կարող ես տնօրինել իմ կեանքը, ինչպէս ցանկանում ես, ասացի ես վերջապէս, բայց գոնէ ասա, ինչու ես ինձ աքսորման դատապարտում։

—Ես քեզ պքսորման չեմ դատապարտում, բայց դու ինքդ էլ գիտես թէ ինչու...

—Գիտեմ, —պատասխանեցի ես անկեղծ տրտմութեամբ ու հեղութեամբ, —նրա համար, որ քեզ համար կը զոհէի արեանս վերջին կաթիլը, նրա համար, որ եթէ մեզնից մէկն ու մէկին կայծակն այս բոպէին խփելու լինէր, ես կը պատսպարէի քեզ և իմ գլուխը կը դնէի կայծակի տակ. որ քո գլխին գալիք բոլոր չարիքները ինձ վրայ կը վերցնէի. վերջապէս նրա համար, որ քեզ կեանքիցս աւելի եմ սիրում, —այդ յիրաւի մահացու մեղքեր են...

—Ո՛չ, —կտրեց խօսքս Անելկան՝ լարելով եռանդը, —այլ նրա համար, որ ես մարդ ունեմ, որին սիրում ու յարգում եմ, և որ չեմ ուզում լսել այդպիսի խօսքեր:

Ես յանկարծ ցնցւեցի անհամբերութիւնից ու բարկութիւնից, ինչպէս էլեքտրական կայծից, ես գիտէի, որ Անելկան ճիշտ չի ասում, որ ամուսնու սիրով ու յարգանքով պատսպարում են բոլոր արամբի կանաչք, երբոր կանգնած են լինում կեանքի ճամբարաժանի վրայ, —դրազ կը գամ որ թէև սրտներումը այդ զգացմունքների նշոյն անգամ չը լինի, էլի նոյնը կ'ասեն. և սակայն Անելկալի խօսքերը այնպէս տրորեցին իմ նեարդերը, որ հազիւ կարողացայ ինձ զսպել ու չը գոռալ. առուտ ես խօսում, զու ոչ սիրում ես նրան, ոչ յարգում: Իսկայ միևնուն ժամանակ մոքովս անցաւ, որ նրա ացդ եռանդը շուտով կը սպառւի, ուստի ողատասխանեցի զբեթէ խոնարհութեամբ՝

—Մի բարկանալ ինձ վրայ, Անելկա, —կը զնամ: —Եւ տեսայ, որ իմ խոնարհութիւնը նրան զինաթափ է անում, որ նա խզճում է ինձ: Յանկարծ ցածիկ ճիւղից մի տերեւ պոկեց ու սկսեց նեարդայոց կերպով կտոր-կտոր անել: Սիրալ սաստիկ լցւել էր և նա գերմարդկացին ճիգ էր թափում հեկեկանքը պահելու համար:

Ես էլ սաստիկ յուզւած էի և շարունակեցի դժւարութեամբ.

—Իսկայ մի զարմանալ, որ ուզում եմ յետաձգել զնալս. ախարինչպէս խօսյն հեռանամ, երբ որ քո պահանջը սարսափելի անարդարութիւն է իմ վերաբերմամբ: Քեզ արդէն ասել եմ, որ ոչինչ չեմ ուզում, բացի այն, որ քեզ հետ միևնուն օդը շնչեմ և քեզ վրայ նայեմ: Աստած էլ աեսնում է, որ իմ պահանջներս չափեց դուրս մեծ չեն: Եւ այդ է իմ բոլոր ունեցած - չունեցած... Իսկ դու այդ էլ ես խլում ինձանից: Մի քեզ ու քեզ մտածիր, ամեն մարդ

կարող է գալ այստեղ, խօսել քեզ հետ, նացել քեզ վրայ, —միայն ես չեմ կարող, —և այդ նրա համար, որ դու ինձ համար աւելի թանկ ես, քան ուրիշների համար: Ի՞նչ աստիճան նրբութեան հասցրած՝ բախսի զաժանութիւն է այդ: Մի րոպէ իմ դրութեան մէջ մոլիր: Քեզ համար այդ գժւար է, որովհետեւ քո հոգին չի շրջապատուած այնպիսի անապատով, ինչպէս իմ, դու սիրում ես մարդուդ կամ ինքդ քեզ խարում ես, թէ սիրում ես, իսկ այդ գրեթէ միւնոյն բանն է, բայց երևակայիր մի րոպէ, թէ դու Աչօն Պլոշովսկին ես, և կը տեսնես, որ այդ՝ մահւան դատավճռիդ վատ է: Պէտք է ինձ վրայ էլ փոքր ինչ խղճալ: Հասկանմաւ ես արդեօք, որ վանելով ինձ, դու ոչ միայն զրկում ես ինձ քեզ տեսնելու բախտաւորութիւնից, այլ և խլում ես կեանքիս վերջին նեցուկը: Քեզ ասել եմ, որ վերադարձել եմ հայրենիք նրա օգոսին աշխատելու դիտաւորութեամբ: Թերեւ այդ աշխատանքի մէջ գանէի ես և՝ մուացութիւն, և՝ հանգիստ, թերեւ քաւէի իմ հին մեղքերը: Օրինակ այս քանի օրս վճռեցի հօրս հաւաքածուները փոխադրել այստեղ, — այժմ դու պատւիրում ես ինձ ձեռք քաշել այդ բոլորից, թողնել ամեն ինչ, գնալ աշխարհէ աշխարհ ընկնել ու նորից սկսել վարել աննպատակ կեանք՝ զուրկ արեի ամենաազօտ ճառագայթից: Լաւ, կերթամ Բայց կերթամ միայն այն դէսքում, ևթէ դու կրկնես քո պատւիրը երեք օրից յետոյ, որովհետեւ այժմ դեռ ենթադրում եմ, որ դու չը գիտէիր, թէ այդ ինչ կը լինի ինձ համար: Այժմ արդէն գիտես: Քեզնից երեք օր եմ խնդրում միայն — ուրիշ ոչինչ:

Անելիան աչքերը ձեռքերով ծածկեց ու սկսեց կրկնել.

— Ախ, Աստւած իմ, Աստւած իմ, Աստւած իմ:

Այն աստիճան խանդաղատիչ էր այդ բացականչութիւնը, այնքան նման էր անօգնական երեխայի տրտունջի, որ մեղքս սաստիկ եկաւ նրա վրայ: Մի րոպէ քիչ էր մնում ընկնէի նրա ոսներն ու համաձայնէի կատարել նրա բոլոր սկահանջները: Բայց հէնց այդ տրտունջը ինձ երեւաց աւետումն մօտաւոր յաղթութեան և ափսոս եկաւ զրկւել այդ յաղթութեան պտուղներից:

— Լսիր, ասացի, միայն մի դէպքում ես կը գնայի այստեղից խկոյն և եթ, հէնց այսօր ու այնքան կը հեռանայի, որ սարեր ու

ծովեր բաժանէին մեզ իրարից,—եթէ գիտենալի, թէ այդ ոչ միայն նրա համար և քեզ պէտք, որ հանգիստող չը վրդովես շարունակ տեսնելով իմ թշւառութիւնը, այլ և քո սեփական սրտի համար: Ես խօսում եմ քեզ հետ իրեւ բարեկամ և եղբայր. ես գիտեմ հօրաքրոջիցս, որ դու սիրում էիր ինձ. եթէ այդ զգացմունը դեռ չի հանգել քո սրտում, այն ժամանակ ես վաղը այստեղ չեմ լինիլ:

Անկեղծ էին ասածներս, սրտիս կակիծն էր թելադրում լեզւիս, և ասկայն այդ խօսքերը սարսափելի որոգայթ էին Անելկայի համար, որովհետև կարող էին սիրոց խոսողվանութիւն դուրս քաշել նրա բերանից. իսկ եթէ յանկարծ այդ յաջողւէր, չը գիտեմ, գուցէ և Բնկ որ գնացի, բայց անպատճառ իսկոյն կը գրկէի նրան: Սակայն Անելկան միայն ցնցւեց, ինչպէս եթէ ես անզգուշութեամբ ձեռք տայի նրա վերքին. նրա երեսը մի ակնթարթում կարմրատակեց բարկութիւնից ու զայրոցթից:

— Ոչ, — գոչեց նա յուսահատ յափշտակութեամբ, այդ սնւտ է, սնւտ է, կուզես գնա, կուզես մնայ, բայց այդ սնւտ է, սնւտ է:

Բայց Ի՞ս հէնց նրա տաքանալուցը եղբակացրեցի, որ գուցէ այդ ճիշտ է: Սրտում յանկարծ վայրենի ցանկութիւն ծագեց կո պիտ կերպով, ուղղակի նրա երեսին ասել այդ, բայց հեռուից նկատեցի մեզ մօտեցող հօրաքրոջս: Անելկան միջոց չունեցաւ զսպելու իւր յուզմունքը, այնպէս որ հօրաքրոյրս նրան վրայ նայելու պէս իսկոյն հարցրեց.

— Ի՞նչ է պատահել քեզ: Ինչի մասին էիք խօսում Լէօնի հետ:

— Անելկան ասացի ես,—պատմում էր ինձ, թէ ինչպէս վատ է ազգել իւր մօր առողջութեան վրայ Գլուխովի վաճառումը, և ես չեմ զարմանում որ այդ պղտորեց նրա սիրուր...

Արդեօք բռլորովին սպառել էին արդէն Անելկայի ոյժերը, թէ գուցէ իմ ասած սուտը, որ նա ստիպւած էր լուսութեամբ հաստատել, լցրեց առանց այն էլ արդէն լիքը դառնութեան բաժակը, — չը գիտեմ, բայց նա այդ բոսէին յանկարծ ակնեց անզուսպ կերպով լալ. նրա ամբողջ մարմինը հեկեկանքից ջղաձգաբար ցընցւում էր. հօրաքրոյրս առաւ նրան իւր գիրկը ու երեխայի պէս սեղմեց կրծքին:

—Անելիկա ջան, ասում էր նա, աչքիս լոցաբւ Դրա գէմ ինչ
ճար կայ մեր ձեռքին... Ամեն բան Աստծու կամքովն է լինում
Վերջին փոթորկի ժամանակ կարկուտը իմ հինգ ազարակս փչաց-
րեց, ևս պան Խվաստովսկուն մի թժու խօսք անգամ չասացի:

—Չը գիտեմ ինչու այդ կարկուտի ու հինգ ազարակների յի-
շատակութիւնը երեւաց ինձ մի այնպիսի անպատշաճ ու եսական
բան և այնքան ողորմելի՝ Անելիկայի մի կաթիլ արտասունքի համե-
մատութեամբ, որ զայրոյթս եկաւ հօրաքրոջս վրայ:

—Բանը ազարակներումը չէ, ասացի կոպիս կերպով, —Անել-
իկային տանջողը մօր հիւանդաւթիւնն է:

Ես հեռացայ կակծահար սրտով, որովհետև զգում էի, որ տան-
ջում եմ այն կնոջը, որին չէի փոխիլ ամբողջ աշխարհի հետ:
Յաղթութիւնը կարծես տարայ ամբողջ դժի վրայ, և սակայն սիրոս
սաստիկ տիսուր է, որպէս թէ ապազայում ինձ սպասելիս լինէր ինչ
որ անյայտ ու սարսափելի բան:

25 մալիսի

Այսօր երեք օր է անցել մեր վերջին խօսակցութիւնից Անել-
կան շը կրկնեց իւր պահանջը, —կը նշանակի մնում եմ նա ինձ
հետ քիչ է խօսում, աւելի շատ է փակւում իւր սենեակում, բայց
ինձանից շատ էլ խցս չի տալիս. վախենում է, որ եթէ ազգպէս
անի, կը գրաւի պառաւների ուշադրութիւնը ևս աշխատում եմ
նրա վերաբերմամբ լինել բարի, քաղցր ու հոգատար, բայց համը
շեմ հանում, չեմ ձանձրացնում: Ուզում եմ նրան թւայ, որ սիրոս
ինքն է իրան մատնում, բայց ես ձեռքիցս եկածն անում եմ սէրս
թազցնելու համար: Նա պէտք է տեսնի, որ սէրս սաստկանում է,
որովհետև արդարեւ շարունակ սաստկանում է: Անկարելի է, որ այդ
նրա վրայ չազդի: Անչ լինում է լինի, բայց արդէն մենք ունենք մի
ջոկ աշխարհ, որի մէջ երկուսիցս զատ ոչ ոք չկայ. ունենք ընդ-
հանուր գաղտնիքներ, որոնք յայտնի չեն հօրաքրոջս ու պանի Յե-
լինային: Երբ մենք խօսում ենք անտարբեր բաների մտսին, երբ
ուրիշների ներկայութեամբ ճիգ ենք թափում պահպանել արտա-
քուստ մեր հին յարաբերութիւնները, երկուսս էլ միակերպ զգում
ենք, որ մեր սրտի խորքում բոլորովին ուրիշ բան է կատարուում:

վերջապէս ես այնպիսի խօսքեր ու հայեացքներ ունեմ, որ միայն նա է հասկանում: Բանը այդ ընթացքը ստացաւ հանգամանկների շնորհիւ. և թէպէտ այշ կատարւեց աւելի Անելկայի կամքի հաշորհիւ. և թէպէտ այշ կատարւեց աւելի Անելկայի կամքի հաշորհիւ. և թէպէտ այշ կատարւեց աւելի համաձայն, — այնուամենայնիւ այդ մեզ կապում է իրար հետո ժամանակը, ընտելացումը նրա կողմից և իմ համբերութիւնը կը լրացնեն պակասը, ես իմ սէրից կը մանեմ հազարաւոր թելեր, որոնցով կը պատեմ նրան չորս կողմից և որոնք օրէցօր մեզ աւելի ու աւելի ամուր կը կապեն իրար հետո Այդ աշխատանքը ապարդին կը լինէր միայն այն դէպքում, եթէ նա սիրելիս լինէր մարդուն: Այն ժամանակ անշուշտ ես նրա մէջ ասելութիւն կը զարթեցնէի դէպի ինձ: Բայց անցեալը իմ կողմն է, իսկ ներկան կրոմիցկուն չի պատկանում: Դրա մասին դատում եմ բոլորովին օրիեկտիւ կերպով, որպէս թէ մի երրորդ անձն լինէի, և միշտ գալիս եմ այն համոզմունքին, թէ նա իւր մարդուն սիրել չի կարող: Անելկայի դիմադրութիւնը ոչ այլ ինչ է եթէ ոչ ներքին կորի մի արտօսկարդ մաքուր հոգու, որը ուխտադրուժ լինելու մասին մտածել անգամ չի ուզում: Բայց այդ կռւի մէջ ոչ մի բան նրան նեցուկ չի լինում: Գալով ինձ, ես էլ ինձ չեմ խարում: գիտեմ, որ դիմադրութիւնը երկարատե ու դժւար ընկճելի կը լինի: Ես պէտք է ուշքո միշտ վրաս պահեմ: պէտք է ամեն ինչ ընդգրկեմ մորքովս, ամեն բանի նկատմամբ ինքս ինձ պարզ հաշիւ տամ: պէտք է ցանցս այնքան նուրբ թելերից հիւսեմ, որ գրեթէ անտեսանելի լինեն: Ես չեմ կարող սեղմել ժամանակից առաջ կամ չափից գուրս ուժգին ոչ մի ստեղն, բայց կ'աշխատեմ խուսափել սխալներից և չես դադարիլ մինչև որ ուզածիս պէս չը փոփօխեմ նրա հոգին: Վերջապէտ եթէ բան է մի քանի սխալներ էլ անեմ, այդ սխալները կը բջիւն իմ սէրից և յոյս ունեմ, որ հէնց այդ պատճառով իմ օգտին կը ծառայեն:

26 Մակեսի.

Այսօր յայտնեցի Մնեատինսկուն, որ հաստատ վճռել եմ հօրս հաւաքածուները Վարշաւա փոխադրել։ Այդ լուրը անկասկած նրանից կանցնի զանազան լրագիրների, որոնք ձեռաց իմ մտադրութիւնը կը հոչակեն իբրև մի մեծ քաջաքացիական սխրագործու-

թիւն։ Անելկան ակամայլից կը համեմատի ինձ Կրոմիցկու հետ, և այդ համեմատութիւնը իմ օգտին կը լինի։ Բացի այդ հեռագրեցի, որ ըստ կարելոյն շուտով ու առանձին ուղարկեն լինձ Սաստիերատոյի գլուխը։

Նախաճաշի ժամանակ դիտմամբ բոլորի մօտ ասացի Անելկային, որ հայրս այդ պատկերը նրան է կտակել։ Անելկան շփոթւեց, որովհետեւ իսկոցն զլսի ընկաւ, որ հայրս այն ժամանակ համարում էր նրան իւր ապագայ հարսը։ Խակապէս կտակի մէջ նրա անունը մինչև անգամ չի էլ լիւած։ Գրւած է միայն՝ «Մադոննայի գլուխը» (Ք այս ինչ) կտակում եմ ապագայ հարսինո։ Բայց հէնց գրա համար այդ պատկերը ուղում եմ տալ Անելկային։ Խակ այժմ՝ այդ կտակի մասին լիշատակութիւնը մեր երկուսի սրտում զարթեցրեց լիշողութիւնների մի ամբողջ աշխարհ։ Ես էլ հէնց մասամբ նրա համար խօսք զցեցի այդ կտակի մասին, որպէս զի ուղղէի Անելկայի միտքը դէպի այն անցած ժամանակները, երբ նա ինձ սիրում էր և կարող էր սիրել բոլորովին հանգիստ սրտով։ Գրտեմ որ այդ ժամանակւանից մնացել է նրա սրտում և՛ սաստիկ դառնութիւն և՛ սրտագին կարեկցութիւն դէպի ինձ։ Այլապէս չի կարող լինել։ Ես անդառնալի կերպով կորած կը լինէի նրա սրտի համար, եթէ չը լինէր այն խնդիրքս, որով վերջին բոպէում դիմեցի նրան Սնեատինսկու միջոցով։ Այդ հանգամանքը թեթևացնում է իմ մեղքերը։ Այդ բանի մասին միտք անելիս Անելկան պէտք է մտածի, որ ես ուղում էի ամեն բան ուղղել, որ ես սիրում էի իրան, տանջում էի, զղջում էի ու զղջում եմ մինչեօրս, խակ եթէ այժմ երկուսս էլ անբախտ ենք, այդ բանին ինքն էլ է նպաստել։ Այդ տեսակ մտքերը պէտք է ստիպեն նրան ներել իմ մեղքերը, ցաւել անցեալի վրայ և հոգով զմայլել այն երջանկութեան պատկերներից, որ այժմ մեր «հանասպազօրեայ» հացը կը լինէր, եթէ չը լինէին իմ մեղքերն ու նրա խստութիւնը։

Այժմ էլ նրա դէմքից նկատեցի, որ վախենում է այդ հոգեզմայլի տեսիլքներից և ուղում է փարատել այդ տեսիլքները խօսելով անտարբեր բաների մասին։ Հօրաքրոջս ուշ ու միտքը այն աստիճան զբացւած է մօտակայ ձիարշաւով (որի ժամանակ նրա կարծիքով պետական մրցանակը մեր «Naughty-boy»-ն է տանելու),

որ նա ուրիշ ոչ մի բանի մասին չի կարող մտածել, ուստի Անել-կան նրա հետ սկսեց խօսել ձիարշաւի մասին: Բայց խօսում էր խօսած լինելու համար և ի հարկէ սաստիկ մտաշաղ կերպով, ու դրա շնորհիւ մի քանի այնպիսի հարցեր տեղ, որ հօրաքոյրս շարացաւ և ի վերջոց ասաց:

— Խնչղէս տեսնում եմ, որդիս, դու ձիարշաւի մասին ամենելին գաղափար չունես:

Ես աչքերովս ասացի նրան. «Գիտեմ, որ դու այս բոպէիս ուզում ես խեղդել քո մէջ խօսող ձայնը, և նա ինձ այնքան լաւ հասկացաւ, որպէս եթէ միտքս խօսքով արտայայտած լինէի: Եւ յիրաւի համարեա հաւատացածեմ, որ ուշ ու միտքն էլ իմիս նման բոլորովին դրաւած է մեր փոխադարձ յարաբերութեամբ: Ամուսնութիւնից դուրս սիրոյ դաղափարը արդէն պատւաստած է նրա հոգուն, բռւն է դրել մէջը և ոչ մի բոպէ չի հեռանում նրանից: Անելկան պէտք է ապրի այդ գաղափարի հետ ու ընտելանայ նրան: Այլպիսի պայմաններում՝ մարդուն սիրող կնոջ սիրոն անդամ կարող էր սառչել: Զրի կաթիլը շարունակ կաթկթելով քարեր է ծակում: Եթէ Անելկան ինձ գէթ մի փոքր սիրում է, թէ կուզ միայն մեր անցեալը, նա ուզի-չուզի իմս կը լինի: Չեմ կարողանում հանգիստ կերպով դրա մասին մտածել, որովհետև բախտաւորութեան նախազգացումը ճնշում է ինձ:

Կան տեղեր, ուր ծովափը ծածկւած է ոտնասոյզ աւազով: Այն ճանապարհորդի համար, որ սաը դրել է այդ աւազի վրայ, փրկութիւն չը կայ: Մէկ-մէկ ինձ թւում է, թէ իմ սէրը նման է այդ աւազին: Ես Անելկային քաշում եմ այդ աւազի վրայ, բայց ինքս էլ գնալով աւելի ու աւելի թաղւում եմ մէջը:

Նրանի թէ միատեղ թաղւէինք:

28 մալիսի.

Հօրաքոյրս այժմ օրը վեց-ութ ժամ անց է կացնում իւր ազարակներից մէկում, Բուժանքում, որ Պլոշովից մօտ մի մղոն հեռաւորութիւն ունի և ուր նա ժամանակը կորցնում է «Naughty-beoy»-ից հիանալու ու ձիերին վարժեցնող անգլիացի Վէրին վերահսկելու վրայ: Ես երէկ մօտ երկու ժամ այնտեղ էի: «Naughty-

Յօցը ճիշտ որ յոյսեր տւող ձի է և գուցէ մրցելու ժամանակ
շատ էլ «naughty» դուրս չը գայ: Սակայն ինձ ինչ այդ: Զանա-
զան գործեր ստիպում են ինձ գնալ քաղաք, բայց սիրտս չի ու-
ղում հեռանալ Պլոշովից: Պանի Յելինան այժմ աւելի թոյլ է զգում
իրան քան մէկ երկու օր առաջ: Զահէլ Խւաստը (ինչպէս անւա-
նում է նրան հօրաքոյս) այդ ժամանակաւոր բան է համարում: և
միայն պատիրում է, որ շարունակ մէկն ու մէկս հիւանդի կող-
քին նստենք ու զբաղեցնենք նրան, թէ չէ խեղճ կինը սկսում է
մտածել Գլուխովի կորստի մասին և աւելի է խանգարում իւր
նեարդերը: Ես աշխատում եմ գրեթէ որդիական հոգատարութեամբ
վերաբերել նրան, որովհետեւ այդպիսով շահում եմ Անելկայի
երախտագիտութիւնը և սովորեցնում եմ նրան համարել ինձ ամե-
նամօտ մարդ: Էլ առաջւան քէնը չը կայ սրտումն դէպի պանի Յե-
լինան,—նա չափազանց անբախտ է դրա համար, և բացի այդ
սկսում եմ սիրել Անելկայի բոլոր ազգականներին, — բոլորին,
բացի մէկից: Երէկ ու այսօր մի քանի ժամ անցկացրի հի-
ւանդի մօտ Անելկայի ու Խւաստի հետ: Մենք կարդում ու խօ-
սում էինք: Պանի Յելինան գիշերները չի քնում և որով-
հետեւ բժիշկը նրան խլորալ չի տալիս, ցերեկները երկար խօսակ-
ցութիւնից յետոյ սովորաբար քունը տանում է ու խոր քնում է
և — տարօրինակ բան է՝ զարթնում է միայն այն ժամանակի, երբ
մենք լռում ենք ու սենեակում խաղաղութիւն է սկսում աիրել:
Այդ պատճառով մենք առանց նրա վրայ ուշ դարձնելու շարունա-
կում ենք կարդալ ու խօսել: Այսօր էլ այդպէս եղաւ: Եթէ բժշկի
ներկայութիւնը չը լինէր, ես կը կարողանայի բոլորովին ազատ կեր-
պով խօսել Անելկայի հետ:

Ի դէմ. այս քանի օրերս լրագիրներում տեղեկութիւն էր
տպւած գեղեցիկ պանի կորիցկայի ապահարզանի դործի վախճա-
նական դատավարութեան ու վերջաւորութեան մասին: Ամբողջ
Վարշաւան սաստիկ հեռաքը քրուում է այդ դործով, մանաւանդ հօ-
րաքոյրս, որ կորիցկու հեռաւոր ազգականն է: Ես վճռեցի իսկոյն
օդուել յարմար առիթից ու սաստաստել Անելկայի հոգուն մի քանի-
մինչ օրս նրան խորթ գաղափարներ:

— Հօրաքոյը, — ասացի ես խորին համոզմոնքի տոնով, — անի-

բաւացի կերպով է զայլրանում պանի Կորիցկայի վարմունքից։ Իմ կարծիքով նա վարւում է իրեւ խելօք ու ազնիւ կին։ Մարդու կամքը վէրջանում է այնտեղ, ուր սկսում է ուրբ, — մինչև անգամ հօրաքոյրն էլ պէտք է համաձայնի դրան։ Եթէ պանի Կորիցկան սիրում է ուրիշին, այն ժամանակ նրան ուրիշ ոչինչ չի մնում անել, եթէ ոչ բաժանել մարդուց։ Գիտեմ ինչ կասեր հօրաքոյրը և հաւանօրէն ինչ մտածելիս կը լինես այս բոպէին դու, Անելկա, կուզես՝ ասեմ, — դու երեխ կարծում ես թէ նրան մնում է կատարել իւր պարտաւորութիւնը, — չ։

— Ես կարծում եմ, որ դու էլ նոյն կարծիքին ես, — պատասխանեց Անելկան։

— Անկասկած։ Հարցը միայն նրանումն է, թէ ինչ է պարտաւոր անել պանի Կորիցկան։

Զը դիտեմ ինչու երիտասարդ բժիշկը յայտնեց այդ ժամանակ, որ ինքը կամքի ազատութիւն չի ընդունում։ Սակայն յետոյ նա սկսեց ուշադրութեամբ լսել, որովհետեւ դուրն էր զալիս իմ հայեցքների համարձակութիւնը։

Իսկ ես զարմացքի արտայալութիւն տեսնելով Անելկայի երեմն, շարունակեցի։

— Ի՞նչը կարող է աւել վայրենի լինել և աւելի հակառակ ընութեանը, քան պահանջելը որ և է մարդուց, որ նա աւելի սիրածին զոհի պակաս սիրածի հոմար։ Զանազան դաւանութիւններ կարող են որքան ուզէք հակառակ լինել միմեանց, բայց նրանց բոլորի բարոյագիտութիւնը միանման է, և ամուսնութիւնը այդ բարոյագիտութեան համաձայն պէտք է հիմնաւած լինի սիրոյ վրայ։ Ուրեմն ի՞նչ է ամուսնութիւնը։ Կամ մի անխախտելի ու խսկապէս սուրբ բան է, եթէ հաստատած է այդպիսի հիմքի վրայ, կամ թէ, հակառակ դէպքում, բարոյականութեան ու կրօնի հակառակ մի պայմանադրութիւն, որ, իրեւ անբարոյական բան, պէտք է լուծւի։ Ուրիշ խօսքով՝ կնոջ պարտաւորութիւնները պէտք է բղխեն զգացմունքից և ոչ թէ մի շարք աւել կամ պակաս հանդիսաւար ծիսակատարութիւններից, որոնք ինքն ըստ ինքեան լոկ ձևականութիւնների մի շարք են։ Այս ասելուս պատճառն այն է, որ ես այն մարդկանցիցն եմ, որոնք էութիւնը ձևից բարձր են դասում։ Գի-

տեմ; որ ուխտադրժութիւնը խօսքը շատերին սարսափեցնում է; Բայց մի՛ խաբէք ձեզ, թէ կինը ուխտադրուժ է դառնում միայն այն ժամանակ, երբ թողնում է մարդուն; Նա ուխտադրուժ է, և կատարեալ ուխտադրուժ, արդէն այն բոսիէին, երբ զգում է, որ մարդուն այլ ևս չի սիրում: Ինչ կը պատահի, ինչ չի պատահիլ այնուհեակ, —այդ կախւած է միայն նրա արամաբանօրէն վարւելու ընդունակութիւնից, նրա անվեհերութիւնից և նրանից, թէ արդեօք նրա սիրաը ընդունմէ թէ ոչ՝ սիրելու: Պանի Կորիցկան այն մարդուն, որի համար այժմ այրաթող է լինում, սիրելիս է եղել նախ քան իւր այժմեան ամուսնու հետ պսակւելը, և նրան չի առել միմիայն զանազան թիւրիմացութիւնների շնորհիւ, միմիայն այն պատճառով, որ նրա խանդուսութիւնից բղխած վարմունքը սխալմամբ անտարբերութեան նշան է համարել: Պանի Կորիցկայի գլխաւոր սխալը դրանումն է եղել, բայց եթէ այժմ նա ուզում է այդ սխալն ուղղել, եթէ հասկացել է, որ իրաւունք չունի սիրած անձին զոհել չը սիրածի համար, և որ իւր պտրաւաւորութիւնն է վարւել ոչ ընդունած պատշաճի, այլ իւր զգացմունքի համաձայն, դրա համար նրա վրայ կարող են յարձակւել միմիայն փարիսեցիներն ու նախապաշարմունքից կուրացած մարդիկ:

Իմ ասածի մէջ որքան որ ստութիւն կար, նոյնքան էլ անկեղծութիւն կար: Գիտէի որ հօրաքոյրս կը մեռնէր ու չէր համաձայնիլ այն թէօրիային, թէ կամքը վերջանում է այնտեղ, ուր պկտում է սէրը, բայց դիտմամբ այդպէս ասացի, որպէսզի այդ ճշմարտութիւնը Անեկային ներշնչէի իրբե ամեն կասկածից բարձր ճշմարտութիւն: Գիտէի որ պանի Կորիցկան մի թեթևամիտ կին է, որի համար չարժի առաջ քաշել սկզբունքների ծանր թնդանօթները. վերջապէս նրա առաջւայ սիրոյ պատմութիւնը հնարեցի նմանութիւնը աւելի կատարեալ դարձնելու համար: Ըսկհակառակը բոլորովին անկեղծ էի, երբոր խօսում էի սէրից բղխող իրաւունքների ու պարտաւորութիւնների մասին: Ուրիշ հարց է, որ թերեւս ես այդքան անկեղծօրէն համոզւած չը լինէի, թէ այդ թէօրիան ճիշտ է, եթէ որ նա ինձ այդ աստիճան ձեռնտու չը լինէր, բայց մարդս միշտ սուրբեկուի է, մանաւանդ այն մարդը, որ կասկածով է վերաբերում բոլոր օբյեկտիւ ճշմարտութիւններին:

Ես խօսում էի իմ օգտին և յիմար կը լինէի, եթէ խօսէի ինձ
դէմ Ես համազւած էի, որ Անելկացին ծանօթացնելով այդ դադա-
փարների հետ, արագացնում եմ ինձ համար ցանկալի էւոլիցիան
նրա հոգու մէջ, որովհետև այդ դադափարները կարող են նրան
աւելի համարձակ դարձնել ու հնարաւորութիւն տալ իւր խղճի
առաջ արդարանալու: Ի նկատի ունենալով նրա սաստիկ տպաւորւող
քնաւորութիւնը, Ես ենթադրում էի, որ պատւասոս գոնէ մասսամբ
կը բռնի: Եւ յիրաւի նա ինձ շատ լաւ էր հասկանում ու պարզ
տեսնում էի, որ իմ իւրաքանչիւր խօսքը շարժում է նրա նեար-
դերը, ինչպէս կնտնոտոց՝ քնարի լարերը: Որքան ես խօսում էի,
այնքան նրա դէմքը աւելի ու աւելի վառ կարմիր պոյտերով էր
ծածկում: Նա մի քանի անգամ ձեռքը դրեց բորբոքւած թշերին,
կարծես ուզելով այդպիսով հովացնել երեսը և ի վերջոց երբ խօսքս
վերջացրի, ասաց.

—Ապացուցել կարելի է ամեն բան, բայց երբոր մարդ վաս-
րան է անում, խիղճը միշտ ասում է՝ վատ բան է, և անհնար է
լինում համոզել, թէ լաւ բան է:

Երիտասարդ Խւասովսկին երևի այդ ժամանակ մտածում էր,
թէ Անելկան բոլորովին զուրկ է փիլիսոփայական կրթութիւնից.
ս սկզբն Ես, խոստովանում եմ; առաջին բոստէին այնպիսի բան
զգացի ինչպէս եթէ օրինակ սրախաղութեան ժամանակ սրիս ծայրը
դէմ առնէր պատին: Անելկացի պատասխանը իւր պարզութեամբ ու
դոգմատիկականութեամբ չիք դարձեց իմ բոլոր եղանակացութիւն-
ները: Որովհետև եթէ այն սկզբունքը, թէ կամքը վերջանում է
այնտեղ, ուր սկսում է սէրը, կարող է վերջ ի վերջոյ կասկածի
ենթարկել, բոլորովին ակներև ու աներկրայելի ճշմարտութիւն է
ընդհակառակը, թէ ուր սկսում է դոգման, դաւանանքը, այնտեղ
վերջանում են բոլոր գատողութիւնները Կանաչը ընդհանրապէս և
լեհուհիք մամնաւորապէս մինչև այն ժամանակ են համաձայնում
տրամաբանութեանը, քանի որ տրամաբանութիւնը իրանց համար
վլուանգաւոր չի դարձել: Հէնց որ վտանգ են տեսնում, իսկոյն պատս-
պարում են պարզ հաւատալիքների և քրիստոնէականի (ԵԿԵԿԻՆԸ)
հրահանգների ամրոցի պարիսպներում, որ կործանել կարող է մի-
միայն զգացմունքը, ըստ որում դատողութիւնը նրանց դէմ անզօր

է։ Այդ՝ կանանց թոյլ և միւնոյն ժամանակ զօրեղ կողմն է, որովհետև նրանց մտածողութիւնը կորովի կողմից դրա շնորհիւ ստորէ տղամարդկանց մտածողութիւնից, բայց միւս կողմից նրանց սրբութիւնը նոյնպէս դրա շնորհիւ որոշեալ պայմաններում կարող է անցաղթելի լինել։ Սատանան միայն այն դէպքում կարող է ինո՞ջ անկման պատճառ դառնալ, եթէ նրան սիրահարեցնի, —իսկ եթէ ուզենաց դատողութեամբ ազգել, ձեռքիցը ոչինչ չի դալ, թէկուզ և բացառաբար արդարութիւնը նրա կողմը լինի։

Ազգիսի խորհրդածութիւններ սաստիկ վհատեցին ինձ, ինձ թւում էր, թէ ինչ շենք էլ շինեմ, թէկուզ ամենասուրբ կերպով ու ամենատաժանակիր աշխատանքով, Անելկան կը քանդի մի հատիկ բացականչութեամբ՝ «վատ բան է, խիզն դրան դէմ է»։ Եւ այդ բացականչութեան առաջ ես անզօր կը լինեմ։ Բացի այդ ես սաստիկ զգուց է վարւեմ, որսկէս զի չը վախեցնեմ նրան այն գաղափարների ծայրացեղ համարձակութեամբ, որ աշխատում եմ պատաստել նրան, ու չը խորչեցնեմ նրան ինձանից։

Եւ սակայն չեմ կարող բոլորովին ձեռք քաշել և՝ այդ տեսակ նկրտութերից։ Նրանք երբէք չեն կարող գլխաւոր դեր խաղալ Անելկայի հոգին նւաճելու դործում, —խօսք չունեմ։ բայց կարող են խաղալ օժանդակիչ դեր և արագացնել զործի վախճանը։ Նրանք ոչ մի օգուտ չեն ունենալ միայն այն դէպքում, եթէ նա ինձ չի սիրում։ Եթէ այդպէս լինէր, այդ իմ կողմից սարսափելի սխալ կը լինէր, բայց այն ժամանակ էլ հարցը այս կամ այն կերպ կը լուծէր։

29 մակիսի¹⁾

Այսօր չը գիտեմ ինչու մտայ սեղանատուն ու տեսայ, որ Անելկան աթոռի վրայ կանգնած սարքում է պատի ժամացոյցը։ Այն բոպէին, երբ նա, սլաքը տեղը դնելու համար, բարձրացաւ կանգնեց մատների ծայրի վրայ, աթոռը տակին շարժւեց։ Ես հազիւ ժամանակ դտայ բացականչելու «վայր կը նկնես» ու զրկելով

¹⁾) Այս կտորն էլ ոռւսերէն թարգմանութեան մէջ բաց է թողնւած Շանօթ. Թարգմ.

նրան դրեցի գետին։ Մի վայրկեանաշափ ես սեղմում էի կրծքիս
այդ սիրելի մարմինը. իշխելիս նրա մազերը քսւում էին երեսիս և
ես դեմքիս վրայ զգում էի նրա չնշառութիւնը։ Գլուխս սկսեց այն-
պէս պտոյտ գալ, որ ստիպւած էի բռնել աթոռի մշջքից, որպէս
զի վայր չընկնէի, —և նա այդ տեսաւ։ Նա զիտէ, որ ես նրա վրաց
գժւած եմ։ Այսօր այլ ես չեմ կարող գրել։

30 մավասի.

Այսօր ամբողջ օրը ինձ համար թունաւորւեց, որովհետեւ
Անելկան էի առաւտօտեան նամակ ստացաւ Կրոմիցկուց։ Լսեցի, որ
հօրաքրոջս ասում էր, թէ, ինչպէս գրում է, ինքն էլ չը գիտէ,
թէ երբ կը կարողանայ գալ, —գուցէ շուտով, գուցէ և երկու ամ-
սից յետոյն Երևակայել անգամ չեմ կարողանում, թէ ինչպէս պէսք
է տանեմ նրա ներկայութիւնը Անելկայի մօտ։ Երբեմն ինձ թւում
է, թէ ինչ անեմ-չանեմ՝ չեմ կարողանալ տանել։ Յոյսս միմիայն
հանգամանքների յաջողակ բերմունքի վրայ է, որ կարող է նրա
գալուստը ուշացնել։ Խւասուվսկին ասաց, որ պանի Ցելինան, հէնց
որ ոյժերը ներեն, պէսք է գնայ Գաշտէյն։ Այդ այնքան հեռու է
Քաքրից, որ իմ կարծիքով Կրոմիցկուն աշխարհի ծայրը կը թւայ-
իսկ ես կերթամ, երկինքը վկայ, կերթամ։ Ինչ հիանալի բան է
մտածել Խւասուվսկին, հիանալի՝ թէ ինձ համար և թէ պանի Ցե-
լինայի համար, որին այնաեղի լողարանները արդարե կարող են
առողջացնել։ Ես էլ սաստիկ տանջւել՝ յոզնել եմ, պէսք ունեմ
լեռնային օդ ծծելու և աւելի ևս Անելկայի մօտ լինելու։ Վաղը
կը գնամ Վարշաւա ու կը հեռագրեմ լողարանների վարչութեանը,
որ տիկինների համար բնակարան վարձեն։ Եթէ յանկարծ բոլոր
բնակարանները վարձւած լինեն, պատրաստ եմ ամբողջ ամարանոց
գնել։ Երբ որ պանի Ցելինան խօսում էր այն նեղութիւնների ու
հոգսերի մասին, որ քաշելու է Անելկան, եթէ Գաշտէյն գնալու
լինեն, ես ասացի՝ «Այդ ինձ թողէք, ես կանեմ», —ու յետոյ դառ-
նալով դէպի Անելկան աւելցրի ցած ձայնով՝ «Ամեն բան այնպէս
կը կարգադրեմ, ինչպէս իմ մօրս համար կանէի»։ Ցեսնում էի, որ
պանի Ցելինան, որ օրէցօր աւելի ու աւելի թերահաւատութեամբ
է վերաբերւում Կրոմիցկու միլիոններին, վախենում է՝ այնտեղ կե-

Նալը շատ թանկ նստացնեմ իրանց վրայ, բայց ևս արդէն ինձ ու ինձ վճռել եմ նրանց շինծու պայմանագիր ցոյց տալ, որ մինչեւ օրս ծպտուն անդամ չեմ հանել, թէ ևս էլ մոտագիր եմ զնալ Գաշտէն: Ուզում եմ գործը այնպէս փարպետութեամբ տանել, որ հօրաքոյրս ինքը ինձ առաջարկի զնալ և լոյս ունեմ, որ կը յաջողեցնեմ ալդ, որովհետեւ նս ոչնչից :ի կասկածում: Գրեթէ համոզւած եմ, որ հէնց որ յայտնեմ, թէ ուզում եմ ամառը մի որ է լեռնային տեղ զնալ ու սկսեմ որոնել թէ որտեղ է յարմար դրա համար, հօրաքոյրս կասի ինձ՝ Յելինայի ու Անելիայի հետ զնա. թէ քեզ համար ուրախ կը լինի թէ նրանց: Գիտեմ, որ Անելիան այդ որ լսի կը սարսափի, բայց գուցէ և սրտի խորքումը զտնէի մի խորշ, որ ուրախանայ այդ բանից: Դուցէ միտքը դայ կորդիանի հետեւեալ տողը՝ ։Ամեն տեղ ես, - ինձնից վեր, իմ շուրջս և իմ մէջ: Արդարեւ իմ սէրը նրա չորս բոլորքը կախարդւած շրջան է կաղմում: շրջապատում է նրան, կապում է նրան իւր հետ, գրաւում է գէպի ինքը, աշխատում է սողոսկելով մտնել նրա սիրուը, ընդունելով հոգատարութեան կերպարանք դէպի նա և նրա մայրը, ընդունելով կերպարանք այնպիսի ծառայութիւնների, որ նա մերժել չի կարող, եթէ չի ուզում բանալ մօր աչքերը ու զոյց տալ թէ ինչ է կատարում նրանից ծածուկ և այլպիսով աւելի վատացնել նրա վիճակը. թափանցում է նրա հոգու մէջ իբրև երախաւագիտութիւն դէպի ինձ և իբրև կարեկցութիւն դէպի իմ չարաչար տանջանքները. վերջապէս դադար չ, տալիս անցեալի յիշողութիւններով:

Առաւօտից մինչեւ երեկոյ Անելիան լսում է միմիացն գովասանքներ իմ մասին. հօրաքոյրս, ինչպէս միշտ, խելքամաղ է լինում ինձանից, երիտասարդ Խւաստովսկին, աշխատելով ցոյց տալ՝ թէ ինչ աստիճան անկողմնապահ ընդունակ են լինել իւր կուսակցութեան մարդիկ, պնդում է, թէ ևս բացառութիւն եմ կազմում իմ պատաժ շրջանուն, մնում է պանի Յելինան, —մինչեւ անդամ նրա համակրութիւնն էլ եմ զրաւել: Այն աստիճան սրտագին կարեկցութեամբ եմ վերաբերում նրան, որ նա այժմ ինձ—շատ կարելի է ակամայից—սիրում է, —և հաւատացած եմ, սրտի խորքումը ցառում է, որ ես Անելիայի ամուսինը չեմ: Մի խօսքով կարծես Անել-

կային շրջպապատող մարդիկ ու բնութիւնը խօսք են կապել՝ նրան սէր ներազգել (ԵԿԿԱՏԵ):

Խսկ գու հոգոյս հատոր, միթէ կարող ես դիմադրել այդ բոլոր ոյժերին: Ե՞րբ պէտք է գաս ինձ մօտ ու ասես ինձ՝ «Ել չեմ կարողանում դիմանալ» — առ, քոնդ եմ, որովհետև սիրում եմ քեզ:

Վարշաւա, 31 մայիսի.

Պանի Լ....ն, այսաեղի բարեգործական ընկերութիւններից մէկի խնամակալուհին, խնդրել է Կլարային մի կոնցերտ էլ այդ ընկերութեան օգտին տալ: Կլարան մերժել է պատճառ բերելով այն, որ զբաղւած է մի մեծ երաժշտական երկասիրութիւն՝ յօրինելով, որի համար իրան անհրաժեշտ է կատարեալ մտաւոր կետրոնացումն: Սակայն պանի Լ....ին զրած նամակին, որ կարող է քաղաքավարի բացասութեան օրինակ համարել, կցել է այնքան զումար, որքան ստացւել էր իւր առաջին կոնցերտից: Դժւար չէ երեւակացել, թէ ինչ տպաւորութիւն գործեց Վարշաւայում նրա այդ վարմումքը: Օրագիրները մինչև ացժմ դեռ երկար ու բարակ յօդւածներ են գրում դրա մասին, երկինք հասցնելով արտիստունուն ու նրա մեծահոգութիւնը: Ինչ խօսք, որ նրա յիրաւի հարուստ հօր կարողութիւնը օրագիրների էջերում եռապատկել, քառապատկել է: Զը գիտեմ որտեղից է հասարակութեան մէջ լուր աարածւել, թէ Կլարան պսակում է ինձ հետ Գուցէ այդ զրոյցներին առիթ է տւել մեր վաղուցւան ծանօթութիւնն ու մտերսութիւնը և նրա միլիոնների մասին պստող չափազանցրած լուրերը: Այդ որ իմացայ՝ սկզբում մի քիչ չարացայ, բայց միտք արեցի ու տեսայ, որ աւելի լաւ է այդ զրոյցների առաջը չառնեմ, որովհետև նրանց շնորհիւ իմ յարաբերութիւնը դէպի Անելկան ամենայն կասկածներից զերծ կը մնայ:

Երբ որ այսօր կէսօրեալ ընդունելութեան ժամին Կլարայի մօտ էի, առաջինը մօտեցաւ ինձ պանի Կորիցկան սաստիկ սատանայ դէմքով և երաժշտական աշխարհին ու մեր Վարշաւեան high-life-ին պատկանող մի քանի անձերի մօտ բարձրաձայն ասաց:

—Կուզէն, այն ով է զիցաբանութեան մէջ, որ չը կարողացաւ դիմանալ սիրէնայի երգերին:

— Ու ոք չը դիմացաւ, կուզինա, — պատասխանեցի ես, — բացի Աղիսեսից, բայց նա էլ դիմացաւ միայն այն պատճառով, որ առաջուց պատուիրել էր կապել իրան կալմից:

— Իսկ դու այնքան հեռատեսութիւն չես ունեցելի

Ներկայ եղողներից մի քանիսը կծեցին շրթունքները, սպասելով իմ պատասխանին, ուստի պատասխանեցի.

— Երբեմն Կորիցկան, չը նայելով իւր վերին աստիճանի անձնավոտահութեանը, շփոթւեց, իսկ ես տարայ այն փոքրիկ յաղթութիւններից մէկը, որոնց մասին սալոններում խօսելիս միշտ մէջ են բերում վացինը քարին դէմ առաւ։ առածը։

Ուզում են խօսեն, ուզում են չը խօսեն թէ ես պատկւում եմ Կլարայի վրայ, ամեննեին հոգս չէ ու մինչեւ անգամ այն պատճառներով, որ ես արդէն յիշեցի, ուրախ կը լինեմ, որ խօսենու Բայց ամեննեին չէի սպատում, որ իմ այցելութիւնս կարող էր վերջանալ անախորժ կերպով շնորհի նոյն իսկ Կլարայի Երբոր բոլորը ցրւեցին և միայն ես ու Մնեատինսկին մնացինք, Կլարան սկսեց ածել մեզ համար իւր նոր յօրինած կոնցէրալը, որ այնքան հիանալի էր, որ մենք խօսք չէինք գտնում ըստ արժանույն գովելու։ Խնդրեցինք որ վերջաւորութիւնը նորից ածի. նա կրկնեց ու յանկարծ ասաց.

— Այս մնաս-բարեն է. չէ որ աշխարհումն ամեն բան վերջանում է հրաժեշտի ողջոյնով։

— Զը լինի զիտաւորութիւն ունեք մեզնից հեռանալու, — հարցրեց Մնեատինսկին։

— Ամենաշատը տաս օրից յետոյ պէտք է լինեմ Ֆրանկֆուրտում, — պատասխանեց Կլարան։

Նա որ այդ ասաց, Մնեատինսկին դարձաւ դէպի ինձ.

— Դու ինչ կասես դրա առթիւ, դու, որ Պլշչովում մեզ յոյս էիր տալիս, թէ օրիորդը ընդ միշա կը մնայ այստեղ։

— Ես դարձեալ կրկնում եմ, որ օրիորդի յիշատակը միշտ անմուաց կը մնայ այստեղ։

— Ես էլ այդպէս հասկացայ այն ժամանակ, -- պատասխանեց Կլարան միամիտ համակամութեամբ։

— Իսկ իմ բարկութիւնս եկաւ, թէ ինձ վրայ և թէ Մնեատինսկու ու Կլարայի վրայ։ Ես ոչ այնքան ունայնամիտ եմ, ոչ էլ

այնքան յիշար կամ վատահոգի, որ ամեն մի յաղթանակ տանելիս ուրախութիւնից գժւեմ. ուստի այն միոքը, թէ Կլարան իսկապէս կարող է սիրահարւած լինել ինձ վրայ ու տածել անհիմն յուսեր, անասելի տհաճութիւն պատճառեց ինձ: Ես գիտէի, որ նա տածում է դէպի ինձ մի անորոշ զգացմունք, որ որոշեալ պայմաններում կարող էր շատ սաստիկ զարդանալ, բայց չէի սպասում, թէ այդ զգացմունքը համարձակութիւն ունենար որ և է բան պահանջել ու որ և է բան ակնկալել: Յանկարծ մոքովս անցաւ, թէ Կլարային ամենեին անհրաժեշտ չէ գնալ և նա միայն նրա համար խօսք գցեց գնալու մասին, որ տեսնի, թէ ինչպէս կընդունեմ ես այդ լուրը: Այդ պատճառով ես աշխատեցի որքան կարելի էր սառը ընդունել: Դէպի Անելիան զգացած սէրիս նման սէրը պէտք է սովորեցնի սիրոս կարեկցութեան, սակայն Կլարայի տիրութիւնն ու գնալու մասին լիշատակութիւնը ոչ միայն չը լուզեցին սիրոս, այլ և թւացին ինձ անամօթ յաւակնութիւն ու վիրաւորանք իմ վերաբերմամբ:

Ինչպէս ի հարկէ ոչ նրա անսունմիկ լինելու պատճուռով: Ես շատ հեռու եմ այդ տեսակ հայեացքներից: Ակզրում ես ինքս էլ չէի կարողանում ինձ համար պարզել դրա պատճառը, բայց այժմ բացառում եմ այդ տարօրինակ երևոյթը նրանով, որ ես պատկանում եմ Անելիային, պատկանում այն աստիճան բացարձակօրէն ու օտարամերժօրէն, որ ինձ թւում է թէ ամեն մի կին, որ պահանջում է ինձնից թէկուզ սրտիս միմիայն մի զարկ, դրանով իսկ ձեռնամուխ է լինում Անելիայի սեփականութեանը: Այդ բացառութիւնը գոհացնում է ինձ:

Անտարակոյս շատ սրտադին մնաս բարեւ կամեմ Կլարային, երբ որ արդէն վագնումը լինենք, բայց գնալու մասին այդ կանխաժամ ազդարարութիւնը սիրոս լցրեց տհաճութեամբ: Ախ, երեկ միայն Անելիային է ներելի անպատիծ կերպով գալարել իմ ջղերս: Երբէք այն աստիճան տժգոհութեամբ ու կրիտիկաբար նախած չը կամ Կլարայի վրայ, որքան այդ րոպէին: Այդ ժամանակ առաջին անգամը նկատեցի, որ նրա լիքը մարմինը, նրա թափանցիկ կաշին, թուխ մաղերը, կապուտակ ու չափից վեր դուրս պրծած աչքերը և բաց գոյն շրթունքները, մի խօսքով նրա ամ-

բողջ գեղեցկութիւնը լիշեցնում է հարեմական հուրիներին պատկերացնող անճաշակ նկարները կամ որ աւելի վատ է միջնակարգ հիւրանոցի իւղանկար պատկերները: Նրա մօտից դուրս եկայ ամենալատ տրամադրութեամբ և ուղղակի զնացի գրավաճառանոց, ուր ուղում էի մի քանի գիրք ընտրել Անելկայի համար:

Մի շարաթ կը լինէր որ մտածում էի թէ ինչ տալի նրան կարդալու: Զէի ուղում զանց առնել և այդ միջոցը, սակայն իսկապէս շատ էլ կարեռութիւն չեմ տալիս նրան, որովհետեւ շատ դանդաղ է ներգործում: Բացի այդ նկատել եմ, որ մեր կանանց համար, որոնց երևակացութիւնը շատ աւելի բուռն է քան տեմպերամենտը, գիրքը միշտ մի տեսակ անիրական բան է մնում: Եթէ մինչև անգամ սաստիկ տպաւորւող կնոջ ձեռք է ընկնում գիրքը, էլի ամենալաւ դէպքում այն հետևանքն է ունենում միայն, որ այդպիսի կնոջ գլխում մի առանձին, անմարմին և գործնական կեանքի հետ ոչ մի կապ չունեցող աշխարհ է ստեղծում: Մեր կանանցից զրեթէ ոչ մէկի գլխավը չի անց կենալ, թէ զրքերից քաղւած գաղափարները կարելի է իրագործել անձնական վարմունքի մէջ: Ես համոզւած եմ, որ եթէ մի որ և է մեծ ու հռչակաւոր հեղինակ աշխատէր ապացուցանել Անելկային, թէ օրինակ հոգու ու մտքի մաքրութիւնը կնոջ համար ոչ միայն աւելորդ բան է, այլ և բարոյական տեսակէտից ուղղակի դատապարտելի, — և որ աւելին է, — եթէ նա այդ մի որ և է հրաշքով ապացուցանէր, Անելկան այն կարծիքին կը լինէր, թէ այդ սկզբունքը կարող է ճիշտ լինել ամբողջ աշխարհի վերաբերմամբ, ի բաց առած իրան:

Ամենաշատը որ կարող եմ սպասել, այդ այն է, որ նպատակայարմար զրքերի ընթերցումը կը սովորեցնի Անելկային մի տեսակ՝ մոքի զգացմունքների ազատութեան: Ասենք, իսկապէս ասած, դրանից աւելի էլ ոչինչ չեմ ցանկանում: Սիրելով նրան բոլոր հոգով, ես փափագում եմ միայն, որ նա էլ փոխադարձաբար սիրի ինձ, հնարքներ եմ միտուում դրա համար, ոչ մի հնարք զանց չեմ առնում և աւել ոչինչ: Ես որ երբէք ինքս ինձ չեմ խսրում, բացարձակ ասում եմ ինձ ու ինձ, — ցանկանում եմ Անելկային հասցնել այնտեղ, որ նա մարդուն զո՞ի ինձ, բայց չեմ ուղում նրան ոչ: Փչացնել, ոչ էլ անառակացնել: Թող ոչ ոք չասի ինձ, թէ

այդ և րկու բանը իրար բացասում են և թէ ասած սովիետութիւն է. իմ մէջ առանց ալդ էլ մէկ սկեպտիկ դե կայ, որ զլուխս տանում է ամեն բոպէ կրիմելով՝ քեզ համար ես թէօրիա կազմում. անհաւասարմութեան շաւիղը ապականութեան շաւիղ է. եթէ քեզ աւելի ձեռնառ լինէր, դրան հակառակ թէօրիա կը կազմէիրա Դժւար է ասել, թէ որքան տանջանք է պատճառում ինձ այդ Բայց ահա թէ ինչ եմ պատասխանում իմ գևին, — և ակառակ թէօրիաներին էլ կարող էի նմանապէս կասկածով վերաբերւել. ես մոածում՝ գործում եմ, ինչ որ հնարաւոր է գոնել ի պաշտպանութիւն եմ սիրահարութեան, որովհետեւ այդ իմ բնական իրաւունքն է: Երիրորդ աւելի ևս վեհ բնական իրաւունք է սիրոյ զգացմունքը: Զգացմունքները կամ վատթար ու գուեհկական են լինում, կամ վսեմ ու արտակարգ Այն կինը, որ հետեւում է վեհ զգացմունքի ձայնին, չի կորցնում հոգու ազնուութիւնը, թէպէտե արամբի լինի: Ալդակիսի վեհ, բացառիկ սէր եմ տենչում ես զարթեցնել Անելկայի սրտում և այդ պատճառով կարող եմ ասել, որ չեմ ուզում նրան փշացնել կամ անառակացնել:

Ասենք այդ ներքին ընդդիմախօսութիւնները ոչինչ նշանակութիւն չունեն: Եթէ մինչև անզամ բոլորովին անկասկածելի լինէր ինձ համար, թէ վատ եմ անում, եթէ ոչ մի յաղթական պատասխան չը գտնէի էլ տալու իմ գևին, այնու ամենայիւ չէի դադարիլ սիրելուց և գարձեալ կը հետեւէի աւելի զօրեղ ոյժին, ալսինքն կը վարէի այնպէս, ինչպէս կը հրամայէր ինձ կենդանի զգացմունքս և ոչ այնպէս, ինչպէս կը հրամայէին վերացական դատողութիւններա:

Բայց ժամանակակից ինքնազննող ու չափից վեր ինքնազննած մարդկանց իսկական անբախտութիւնն այն է, որ նրանք չը հաւատալով անալիզի հետեւանքներին, միևնոյն ժամանակ անընկճելի պահանջ են զգում քննել իրանց հոգու բոլոր շարժութերը: Այդպէս եմ և ես: Բաւական ժամանակից ի վեր ինձ հանդիսա չի տալիս այն հարցը, թէ ինչպէս է, որ ես, որի էութիւնը ամբողջապէս դրաւած է սէրով, կարողանում եմ այն աստիճան յուշառ լինել, այնպէս կշռադատել այն բոլոր միջոցները, որոնք կարող են ինձ նպատակիս հասցնել, այնպէս պարզ հաշիւ եմ տալիս ինքս ինձ այդ միջոցների մասին, որպէս թէ այդ բոլորը անելիս լինէի բո-

լորովին սառը սրոտով, կամ աւելի ճիշտ ասած՝ որպէս թէ մի ուրիշը այդ անելիս լինէր իմ տեղակի:

Ահա թէ ինչ կարող եմ դրա վերաբերմամբ պատասխանել: Նաև և առաջ՝ արդի մարդս միշտ իւր հոգու մի մասը ազատ է պահում, որպէս զի գործ զնի մասցեալ մասերը դիտելու համար: Բացի այդ՝ զգացմունքի այդ արտաքուստ սառնարիւն և խորհրդածութիւններով, հաշիւններով, նոյն իսկ մեքենայութիւններով լի ժիր գործունեութիւնը իսկապէս ուզիղ յարաբերական է նոյն զգացմունքի բարեխառնութեան աստիճանին: Որքան ջերմ է այդ զգացմունքը, այնքան աւելի է սառը դատողութեանը լարել տալիս ոյժերը իրան ծառայելու համար: Դարձեալ կրկնում եմ, մարդիկ զուր են սիրոյ աչքերը կապւած երևակայում: Սէրը չի ճնշում մարդու դատողութիւնը, ինչպէս որ չի ճնշում սրտի կամ շնչառութեան բարախումը—նա միայն ընկճում է նրան: Դատողութիւնը այդ ժամանակ դառնում է սիրոյ առաջին խորհրդականը ու նւաճելու գործիքը: ուրիշ խօսքով՝ դառնում է Օգոստոս Կեսարի Ազրիապան¹⁾: Նա բոլոր ոյժերը լարւած է պահում, նա վարում է զօրքը, տանում է յաղթութիւններ, բազմեցնում է իւր տիրոջը յաղթական կառքի վրայ, վերջապէս կառուցանում է—ոչ Պանթէօն, ինչպէս պատմական Ազրիապան—այլ Մոնոթէօն²⁾, որի մէջ ծնկաչոք ծառայում է իւր միակ աստւած Կեսարին: Այն միկրոկոսմում (փոքր աշխարհ), որ մարդ է կոչւում, դատողութեան գերը մինչեւ անդամ աւելի բարձր է քան զորավարինը, որովհետեւ նա անվերջ կերպով անդրադարձնում է ամեն բանի ու ինքն իրան դիտակցութիւնը այնպէս, ինչպէս նպատակայարմար դասաւորւած հայելիների համակարգութիւնը անվերջ կերպով անդրադարձնում է մի որ և է առարկայի պատկերը:

(Կը շարունակի)

¹⁾ Մարկ Ազրիապա, Հռոմակացի զօրավար, ապրում էր վերջին դարում Ք. Առաջ. Օգոստոս Օկտավիանի խորհրդականն էր. 36 թւն յաղթելով Սեքստ Պոմպէվն և 31 թւն փակուն յաղթանակ տանելով Անտոնիոսի, ու Կլուստարակի միացեալ ուժերի դէմ (Ակցիումի մօտ), հիմն դրեց Օկտավիանի միանեանութեան:

Ա. Թ.

²⁾ Պանթէօն կոչւում էր Յունաստանում ու Հռոմում բոլոր աստւածներին նւիրւած տաճարը (ամենադից մեծան): Մոնոթէօն՝ կը նշանակի մի աստծու տաճար: Յունարէն՝ պան կը նշանակի—ամեն, թէս—աստւած, մոնոս—մէկ:

Ա. Թ.